Ազգ
Azg
27 ՆՈՅԵՄԲԵՐ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 206(5289)
ISSN: 1829-1651

# Աղքատությունը Հայաստանում նվազել է, բայց դեռեւս աղքատ է 980 հազար մարդ

## *Իրենց աղքատ համարողներն ավելի քիչ են, քան իրական աղքատությո՞ւնն է*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**2012-ին աղքատության ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է եւ կազմել 32,4 տոկոս՝ նախորդող 2011 թվականի 35 տոկոսի համեմատ: Այս մասին հայտնի դարձավ ազգային վիճակագրական ծառայության երեկ հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցից, որը պատրաստվել է 2012-ին՝ տնային տնտեսությունների կենսամակարդակի ուսումնասիրության արդյունքների հիման վրա: Ուսումնասիրությունն իրականացվել է սպառման ցուցանիշները հիմք ընդունելով, քանի որ այն ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում, քան եկամտի ցուցանիշը:**



**Այսպիսով, նախ այն մասին, թե ի՞նչ է աղքատության գիծը եւ ինչպե՞ս է դասակարգվում: 2012-ին աղքատության գիծը հաշվարկվել է՝ օգտագործելով 2009-ին փաստագրված նվազագույն պարենային զամբյուղը եւ ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը: Աղքատության վերին ընդհանուր գիծ է գնահատվել մեկ չափահաս անձի հաշվով ամսական 37 հազար դրամ սպառումը, աղքատության ստորին ընդհանուր գիծ է գնահատվել մեկ չափահաս անձի հաշվով 30 հազար դրամ սպառումը, եւ վերջապես աղքատության պարենային կամ ծայրահեղ գիծ է գնահատվել 21,7 հազար դրամ սպառումը:**

*Տես էջ 2*

# Տիմոշենկոն անժամկետ հացադուլ է հայտարարել

**Ուկրաինայում բանտարկված նախկին վարչապետ Յուլյա Տիմոշենկոն «անժամկետ հացադուլ» է հայտարարել Եվրոմիության հետ Ասոցիացման պայմանագիր ստորագրելու պահանջով:**

**Տիմոշենկոյի փաստաբանի խոսքերով՝ նա կոչ է անում «երկրի երեսից ջնջել» նախագահ Յանուկովիչի կառավարությունը, որը հրաժարվեց ստորագրել այդ պայմանագիրը:**

**«Մի՛ նահանջեք, գնացե՛ք դեպի հաղթանակը: Եթե նոյեմբերի 29-ին Յանուկովիչը չստորագրի Ասոցիացման համաձայնագիրը, ապա երկրի երեսից ջնջե՛ք նրան իր կաշառասուն շնափուկների հետ մեկտեղ», հայրենակիցներին կոչ է արել Տիմոշենկոն, որի խոսքերը մեջբերում է BBC News հեռուստաալիքը:**

**Ավելի վաղ՝ երկուշաբթի օրը, նախագահ Յանուկովիչը Ուկրաինայի ժողովրդին էր դիմել պետության ղեկավարի պաշտոնական կայքէջում: Նա հայտարարել էր, որ երկիրը գտնվում է «ճնշման տակ», որի հետեւանքով «արտադրությունը կանգ կառնի, եւ միլիոնավոր քաղաքացիներ դուրս կնետվեն փողոցներ»:**



**Միեւնույն ժամանակ, ըստ Յանուկովիչի, «Ուկրաինան եվրոպական չափանիշների հասարակության կառուցման այլընտրանք չունի»: Նա պնդում է, թե երկրում մարդու իրավունքները, իրավահավասարությունը, ընտրության իրավունքը, սոցիալական պաշտպանությունը «բարձրագույն արժեքներ են»:**

**«Ոչ ոք մեզանից չի զողանա հավասար հնարավորությունների Ուկրաինայի, եվրոպական Ուկրաինայի մասին մեր երազանքը», գրել է Յանուկովիչը իր կայքէջում:**

# Հայաստանը, Ուկրաինան, Ադրբեջանն ու Վրաստանը Վիլնյուս կներկայանան ի դեմս նախագահների

Արեւելյան գործընկերության երկրներից Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի ու Ուկրաինայի նախագահները, Մոլդովայի վարչապետն ու Բելառուսի արտգործնախարարը կմասնակցեն նոյեմբերի 28-29-ին Վիլնյուսում տեղի ունենալիք Արեւելյան գործընկերության գագաթաժողովին: Այս մասին երեկ տեղեկացրեց Եվրոպական հանձնաժողովի մամուլի հաղորդագրությունը: Այսինքն՝ Հայաստանը Վիլնյուսի գագաթաժողովում ներկայացված է լինելու ամենաբարձր՝ նախագահ Սերժ Սարգսյանի մակարդակով, սակայն այդ մասին տեղեկացումն առաջինը ստացվեց:

Եվ միայն ժամեր անց Հայաստանի նախագահի պաշտոնական կայքէջում հայտնվեց տեղեկատվություն, որ նախագահ Սերժ Սարգսյանը նոյեմբերի 28-ին երկօրյա աշխատանքային այցով կմեկնի Լիտվայի Հանրապետություն՝ մասնակցելու Վիլնյուսում կայանալիք Եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) եւ ԵԺԿ Արեւելյան գործընկերության պետությունների ղեկավարների գագաթաժողովներին: Նույն հաղորդագրության համաձայն՝ այցի շրջանակներում Վիլնյուսում նախատեսվում են նաեւ հանրապետության նախագահի երկկողմ ձեւաչափով հանդիպումներ:

Իսկ մամուլի հաղորդագրությունը, որ հրապարակվեց ԵՀ պաշտոնական կայքէջում, տեղեկացնում է նաեւ, որ գագաթաժողովին մասնակցելու են ինչպես Արեւելյան գործընկերության երկրները, այնպես էլ ԵՄ 28 անդամ պետությունների ղեկավարները:

Գագաթաժողովը կնախագահի Եվրոպական խորհրդի նախագահ Հերման վան Ռոմպեյը՝ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզզոյի հետ: Գագաթաժողովին կմասնակցեն նաեւ Եվրոպական խորհրդարանի նախագահ Մարտին Շուլցը, ԵՄ արտաքին հարաբերությունների ու անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ, ԵՀ փոխնախագահ Քեթրին Էշթոնը, ընդլայնման ու եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն ու առեւտրի հարցերով հանձնակատար Կարել դե Գուխտը:

Երկօրյա գագաթաժողովի օրակարգով նոյեմբերի 28-ի համար ըստ էության ոչ պաշտոնական ընթրիք է նախատեսված: Նոյեմբերի 29-ին արդեն, ըստ լիտվական նախագահության պատրաստած օրակարգի, կլինեն ստորագրման արարողություններ՝ առանց մանրամասնելու, թե ինչ է ստորագրվելու եւ ում միջեւ: Այդուհետեւ հենց նստաշրջանն է, որին կհաջորդի մամուլի հաղորդագրությունը:

«**Ազգի**» տեղեկություններով՝ Հայաստանի հետ առանձին փաստաթղթի ստորագրումը շատ փոքր հավանականություն ունի, քանի որ Հայաստանի անունից ինչ-որ բան առաջարկվել է, բայց արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի՝ տարբեր երկրների այցելությունները թերեւս բավարար չէին շատ կարճ ժամանակում ԵՄ-ի անդամ երկրների համաձայնությունն այդ փաստաթղթի առնչությամբ ստանալու համար, ինչը պարտադիր պայման է ԵՄ-ի հետ որեւէ փաստաթուղթ համաձայնեցված համարելու համար:

Ուկրաինան էլ ամենայն հավանականությամբ առանց ստորագրելու կթողնի Ասոցիացման համաձայնագիրը, իսկ Մոլդովան ու Վրաստանը դեռ երեկվա դրությամբ պատրաստակամ են նախաստորագրելու Ասոցիացման համաձայնագրերը: Վրաստանի հետ նախատեսվում է նաեւ շրջանակային համաձայնագիր ստորագրել ԵՄ-ի ճգնաժամերի կառավարման գործողություններում Վրաստանի մասնակցության մասին:

Ադրբեջանն էլ դեռ նոր հնարավոր է, որ ստորագրի վիզային ռեժիմի դյուրացման համաձայնագիրը:

Ավանդական տարբերակով արդեն նաեւ նախատեսվում է, որ հռչակագրով հանդես կգան արեւելյան գործընկեր բոլոր երկրները:

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

# Հայաստանից ու Մոսկվայից մինչեւ Գերմանիա «բժշկական» միջնորդական խաբեբայություն

Մեր ազգակիցներից նրանք, ովքեր տառապում են քաղցկեղով կամ ծանր այլ հիվանդությամբ, որպես փրկության վերջին հույս ձգտում են բուժվել դրսում, հատկապես Գերմանիայում, դրա համար ծախսելով իրենց ունեցածն ու չունեցածը, հաճախ նաեւ հարազատների ու բարերարների տրամադրած գումարները: Անշուշտ, Գերմանիան ունի բժշկական բարձրակարգ համակարգ՝ հայտնի ողջ աշխարհում: Սակայն Հայաստանից ու Մոսկվայից մեր ազգակիցները Գերմանիա բուժման մեկնելու ճանապարհին հանդիպում են միջնորդական ծառայություններ առաջարկողների, որոնցից մեկի մասին օրերս հոդված է հրատարակել գերմանական «Շպիգել» շաբաթահանդեսը, դիմակազերծելով այդ միջնորդ խաբեբաներից մեկին՝ Արսեն Բաբայանին, որն օգտվելով օրհասական վիճակում գտնվող հիվանդի կամ նրա հարազատների հուսահատ վիճակից՝ կողոպտում է նրանց բառի իսկական առումով: Շնորհիվ իր գովազդային ցանցի ու Երեւանում բացած IMZ Yerevan գրասենյակի «միջնորդական առաքելության», այս անձը գանձում է ոչ միայն իր «ծառայությունների», այլեւ Գերմանիայում հիվանդանոցային բուժման համար կրկնապատկված ու եռապատկված հաշվեցույցերի դիմաց:

Մեր վաղվա համարում թարգմանաբար ներկայացնում ենք «Դեր Շպիգելի» հոդվածը:

# Ոստիկանությունը կոնֆերանսներում եւ կյանքում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի եւ Հայաստանի ոստիկանության միասին կազմակերպած երկօրյա կոնֆերանսը, որին աջակցել էր նաեւ Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնեւի կենտրոնը, Հայաստանում ոստիկանության բարեփոխումների ներկա ու ապագա քայլերն էր քննարկում երեկ: Որեւէ կոնֆերանս որեւէ թեմայով հայ հանրությանն այլեւս հետաքրքրական չէ այն պատճառով, որ կոնֆերանսներում սովորաբար հնչած մտքերի բարձր տոնայնությանը հակադրվում է մեր գածոռակ կյանքը, որտեղ սովորաբար հնչած մտքերի հակապատկերն է լինում: Սակայն ներկայումս Հայաստանում իրականացվող




բողոքի տարբեր գործողությունների եւ այդ միջոցառումներին մեր ոստիկանության պահվածքի ֆոնին ուզեցինք տեսնել, թե, այնուամենայնիվ, ի՞նչ են խոսում այդ միջազգային կոնֆերանսում:

*Տես էջ 3*

# Աղքատությունը Հայաստանում նվազել է, բայց դեռեւս աղքատ է 980 հազար մարդ

1-ին էջից

Դա նշանակում է, որ ամսական մինչեւ 37 հազար դրամ մեկ շնչի հաշվով ստացողը համարվում է աղքատության գծից ցած եւ աղքատ, 30 հազար դրամից ցածր ստացողը՝ շատ աղքատ, իսկ 21 հազար դրամից ցածր ստացողը՝ ծայրահեղ աղքատ: Տոկոսային առումով բնակչության մոտ մեկ երրորդը՝ 32,4 տոկոսը 2012-ին եղել է աղքատ, որից 13,5 տոկոսը՝ շատ աղքատ, իսկ 2,8 տոկոսը՝ ծայրահեղ աղքատ: Այսինքն, աղքատների թիվը կազմել է 980 հազար, որից 408 հազարը շատ աղքատներն են եղել, իսկ 85 հազարը՝ ծայրահեղ աղքատները: Ծայրահեղ աղքատները 2008-ի համեմատ ավելացել են 1,2 տոկոսային կետով, շատ աղքատները՝ 0,9 տոկոսային կետով, իսկ աղքատության ընդհանուր մակարդակը՝ 4,8 տոկոսային կետով

Զեկույցում նշվում է, որ չնայած 2011-ի համեմատ 2012-ին աղքատությունը նվազել է, բայց դեռեւս գերազանցում է 2008-ի աղքատության մակարդակը: Այդ տարվանից հետո աղքատության ցուցանիշի ավելացումը զեկույցի հեղինակները կապում են համաշխարհային ֆինանսատնտեսական, պարտքային իրացվելիության եւ վստահության ճգնաժամերի՝ մեր երկրի տնտեսության վրա թողած վնասակար ազդեցությունների հետ:

Ազգային վիճակագրական ծառայության ուսումնասիրությունից տեղեկանում ենք նաեւ, որ աղքատության մեծ տարբերություն քաղաքային եւ գյուղական բնակավայրերի միջեւ չկա: Քաղաքներում աղքատության մակարդակը 32,5 տոկոս է, գյուղերում՝ 32,1 տոկոս: Ընդ որում, աղքատությունը 2008-2012-ին ավելի արագ ավելանում էր քաղաքային բնակավայրերում, քան գյուղական՝ 4,9 տոկոսային կետ՝ 4,6 տոկոսային կետի դիմաց:

Աղքատության ամենացածր ցուցանիշը Երեւանում է՝ 25,6 տոկոս, որը 1,6 անգամ ավելի ցածր է մայրաքաղաքից դուրս գտնվող այլ բնակավայրերի համեմատ: Սակայն անցած տարիներին աղքատությունն ավելի արագ տեմպերով աճել է հենց Երեւանում՝ 5,5 տոկոսային կետով, այլ քաղաքների 4,4 տոկոսային կետի համեմատ: Աղքատությունը դիտարկելով քաղաք-գյուղ բաշխվածությամբ, զեկույցի հեղինակները պարզել են, որ աղքատների մեծ մասը՝ 64,4 տոկոս, ապրում է քաղաքներում:

Ինչ վերաբերում է անհավասարության ցուցանիշին շատ աղքատների եւ շատ հարուստների միջեւ, ապա թե՛ սպառման, թե՛ եկամուտների առումով այն խորացել է: Եկամուտների առումով անհավասարությունը բնութագրող Ջինի գործակիցն ավելացել է՝ կազմելով 0,372՝ 2008-ի 0,339-ի համեմատ, սպառման ցուցանիշով Ջինի գործակիցը կազմել է 0,269՝ 2008-ի 0,242-ի համեմատ:

Բավականին հետաքրքրական են տնային տնտեսությունների չափահաս անձանց գնահատականները իրենց բարեկեցության վերաբերյալ: Նրանցից միայն 17,6 տոկոսն է իրեն համարել աղքատ՝ աղքատության հաշվարկված 32,4 տոկոս ցուցանիշի պարագայում: Փոխարենը իրենց ծայրահեղ աղքատ համարողները կազմել են 3,1 տոկոս 2,8 տոկոս գնահատված ծայրահեղ աղքատության պարագայում: Ընդ որում, 2008-ին, երբ աղքատության մակարդակը մոտ 27 տոկոս էր, իրենց աղքատ էին համարել հարցվածների 17 տոկոսը, իսկ այժմ, երբ աղքատությունը գնահատվել է 32,4 տոկոս, իրենց աղքատ են համարում 17,6 տոկոսը: Փաստորեն, իրենց աղքատ համարողներն ավելի քիչ են, քան իրական աղքատությո՞ւնն է: Սա կարո՞ղ է նշանակել, որ սկսել ենք ավելի քիչ դժգոհել կյանքից՝ հազիվ թե: Հավանաբար հարցվողների մի մասն ավելի համեստ սպառման տվյալներ է ներկայացրել, քան իրենց իրական կենսամակարդակն է, եւ որի վերաբերյալ ավելի անկեղծ կարծիք են հայտնել:

ԼԻԱՐԺԵՔ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

## Դիլիջանի միջազգային դպրոցը ստացել է «IB World School» արգավիճակի հավաստագիր

**Դիլիջանի միջազգային դպրոցը (UWC Դիլիջան) ստացել «IB World School» դպրոցի լիարժեք կարգավիճակ: Դա նշանակում է, որ դպրոցն իրավունք է ստացել 2014թ. սեպտեմբերից իր 16-ից 18 տարեկան սաներին առաջարկել անգլերեն լեզվով դասավանդվող IB (Միջազգային բակալավրիատի) դիպլոմ ծրագիրը:**

**IB ծրագիրը համաշխարհային կրթական շրջանակներում ակադեմիական ազնվության եւ մտավոր հզոր ներուժի խորհրդանիշն է դարձել ՝ ուսանողներին կրթական ամենաբարձր չափանիշներով նախապատրաստելով աշխարհի լավագույն համալսարաններ ու քոլեջներ ընդունվելու համար:**

**«Դիպլոմա» ծրագրի շրջանակներում UWC Դիլիջանի ուսանողները կանցնեն երեք «Բարձր մակարդակի» (HL) եւ երեք «Ստանդարտ մակարդակի» (SL) առարկաներ: IB ծրագրի դիմորդներից կպահանջվի ներկայացնել ծավալուն շարադրություն (Extended Essay), ավարտել ճանաչողության տեսության (Theory of Knowledge (TOK) դասընթացը եւ ակտիվորեն ներգրավված լինել զանազան ստեղծագործական, սոցիալապես ակտիվ եւ կամավորական (Creativity, Action and Service (CAS) ծրագրերում:**

**Հոկտեմբերին Դիլիջանի միջազգային դպրոցը դարձավ Միացյալ համաշխարհային քոլեջներ (United World Colleges-UWC) կրթական ցանցի լիիրավ անդամ եւ ստացավ UWC Dilijan անվանումը:**

**Դիլիջանի միջազգային դպրոցը լայնածավալ բարեգործական նախաձեռնություն է, որի շնորհիվ Հայաստանը ներկայացված կլինի համաշխարհային կրթական քարտեզի վրա:**

**Դպրոցն իր դռները կբացի 2014 թ. սեպտեմբերից՝ 90 աշակերտների համար: 2023-ին դպրոցում կուսանեն 650 աշակերտներ 60 երկրներից: Աշակերտների 90 տոկոսը կսովորի նվիրատուների հատկացրած կրթաթոշակներով:**

## Հայրիկյանը՝ նախագահականի մոտ




**Պարույր Հայրիկյանն ու իր կողմնակիցները երեկվանից նստացույց են սկսել նախագահականի դիմաց՝ «Վիլնյուս կամ հրաժարական» պահանջով: Հայրիկյանը Եվրոմիությունը կայացած կառույց է համարում մշուշոտ Մաքսային միության համեմատ: Նրա կարծիքով՝ հայերը փորձաճագարներ չեն, որ ենթարկվեն բռնապետների փորձարարական առաջարկների: Հայրիկյանը Հայաստանի նախագահից փաստորեն պահանջում է ստորագրել Ասոցիացման համաձայնագիրը:**

## Օծվեց Տաշիրի Մեծավան գյուղի Սուրբ Գեւորգ եկեղեցին

Որքան էլ մեծ լինի մարդու հավատքն առ Աստված, հարկ է նրան ունենալ աղոթքի տուն, որը կլինի Աստծո հետ հաղորդակցվելու վայր, ուր ամենօրյա աղոթքներով իր ուխտը կնորոգի Տիրոջ առջեւ: Եվ այս սկզբունքով այսուհետեւ հոգեւոր իրենց պետքերը հոգալու հնարավորություն ունեն նաեւ Մեծավան համայնքի բնակիչները եւս:

Սբ Գեւորգ եկեղեցին ամենաշատ սիրված սրբավայրն է բնակիչների համար: Ուշ միջնադարյան այս սրբավայրը թվում էր հավատացյալների առջեւ փակված անդարձ... Խորհրդային տարիներին եկեղեցին օգտագործվել էր որպես կոլտնտեսության պահեստ, ապա դարձել կիսավեր, փլված տանիքով մոռացված մի շինություն: Այսօր սրբավայրը կրկին վեր է հառնում իր տեղում՝ նույն գեղեցկությամբ ու ճոխությամբ եւ դարձյալ հիացնում է բնակիչներին՝ արդեն նորակառույց զանգակատնով եւ բարեկարգված վիճակով:

Մեկ ամիս առաջ, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Չուլջյանի, օծվեցին եկեղեցու զանգակատան խաչն ու զանգը, իսկ ահա օրերս վերաօծվեց Սբ Գեւորգ եկեղեցին եւ իր դռները բացեց հավատավոր բնակիչների առջեւ: Եկեղեցու վերակառուցման եւ կահավորման աշխատանքների բարերարությունը ստանձնեցին եւ ավարտին հասցրեցին մոսկվաբնակ Արթուր, Հովսեփ եւ Արշակ եղբայրները՝ ի հիշատակ Մելքոնյան գերդաստանի: Գարնանը նախատեսվում է բարեկարգման աշխատանքները ավարտին հասցնել:



Վերաօծման արարողությանը ներկա էին Վայքի թեմի առաջնորդ Զարեհ վրդ. Կաբաղյանը, Տաշիրի տարածաշրջանի եւ Վանաձոր քաղաքի հոգեւոր հայրերը, բարերար եղբայրներն իրենց ընտանիքներով, Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, մարզային եւ քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, համայնքապետներ, Մեծավանի ու շրջակա գյուղերից հարյուրավոր բնակիչներ եւ ուխտավորներ տարբեր տարածաշրջաններից ու մարզերից: Պատարագիչն էր Վանաձորի Սբ Գրիգոր Նարեկացի առաջնորդանիստ եկեղեցու սպասավոր Ներսես քահանա Ղալայանը:

Թեմակալ առաջնորդ Սեպուհ սրբազանը շնորհակալություն հայտնեց բարերար Մելքոնյան ընտանիքին եւ շնորհավորեց ներկաներին՝ նոր ուխտատեղի, նոր սրբավայր ունենալու կապակցությամբ.«Սիրելի մեծավանցիներ, Աստծուն մերձենալու ճանապարհը անցնում է եկեղեցու միջոցով: Եկեղեցին հայի կյանքում հանդիսացել է այն հանգրվանը, ուր համախմբվել են իր զավակները, կրթվել, դաստիարակվել ու առաջնորդվել են դեպի հավիտենականություն, դեպի Աստված: Եվ դուք, սիրելի իմ հավատացյալներ, ճամփորդ եք այդ հավիտենականության», նշեց թեմակալ առաջնորդը:

Սրբազան հայրը օրհնեց բարերարներ Արթուր, Հովսեփ եւ Արշակ եղբայրներին ու նրանց ընտանիքներին եւ առ ի երախտագիտություն՝ ընթերցեց Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի օրհնության գիրը, որը եւ հանձնեց նրանց՝ նվիրելով նաեւ սրբապատկերներ:

Համայնքի համար բացառիկ իրադարձություն էր այս տոնախմբումը, քանզի Սբ Գեւորգ եկեղեցու զանգերը երկար ընդմիջումից հետո կրկին ղողանջեցին, եւ սրբավայրի դռները բացվեցին հավատավոր հայորդիների առջեւ՝ թեմի ուխտավայրերի թվին ավելացնելով եւս մեկը:

Հավարտ սրբազան արարողության՝ ներկաներին մատուցվեց երախտիքի եւ գոհության մատաղ:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

# Ռուսաստանի առաջին դեմքն ու Հայաստանի երկրորդ քաղաքը

Ամենեւին էլ ոչ Կրեմլի հաստ ու կարմիր պատերին մոտ կանգնած մեր «հավաստի աղբյուրները», այլ գյումրեցի մեր ծանոթները (ոչ մի դեպքում չխառնել «մեր աղբյուրներ»-ի հետ) եւ ոգեւորված, եւ հեգնանքով հայտնում են, թե Հայաստանի երկրորդ քաղաքը այս օրերին հաճելիորեն կերպարանափոխվում է: Միջին տարիքի գյումրեցիները, իսկ ավելի երիտասարդների մասին էլ խոսք չկա, նման «քաղաքային ուբոռկա» չեն էլ հիշում, թե ե՞րբ է վերջին անգամ եղել: Պատճառն այս ամենի վաղուց հայտնի է. դեկտեմբերի սկզբներին Հայաստան է ժամանում Վլադիմիր Պուտինը, գյումրեցիների ասած՝ «Ավելին, քան Ռուսաստանի նախագահը»: Ուշագրավ է, որ Գյումրին կերպարանափոխվում է այն պայմաններում, որ ոչ ՀՀ, ոչ ՌԴ նախագահների պաշտոնական կայքերը որեւէ տեղեկություն չեն տալիս Ռուսաստանի նախագահի՝ Հայաստան կատարելիք մոտակա այցի վերաբերյալ. գյումրեցիներն այս կապակցությամբ էլ ասելիք ունեն. «Հիմա մարդը երբ կգա՝ կգա, կարեւորը՝ քաղաքը կարգի բերեք: Թեկուզ երկու տարուց գա, հազիվ էլ հասցնենք...»:




Այսինքն հայտնի չէ, թե կոնկրետ որ օրը Հայաստան ժամանող Պուտինը, մայրաքաղաք Երեւանից բացի, կլինի նաեւ Գյումրիում: Իհարկե, ակնհայտ է, որ ՌԴ նախագահը Գյումրիում չէր լինի, եթե Հայաստանում տեղակայված ռուսական ռազմաբազան լիներ ոչ թե ՀՀ երկրորդ քաղաքում, այլ, ասենք, Վարդենիսում: Հետեւաբար, Պուտինը այցելում է ոչ այնքան Գյումրի, որքան իր երկրի ռազմաբազա: Խնդիրն այստեղ հետեւյալն է, որտե՞ղ սկզբում կլինի Պուտինը, նա սկզբում կժամանի Գյումրի՞, թե՞ Գյումրի կմեկնի արդեն Երեւանից: Սա, ըստ Պուտինին «խիստ սիրող» մեր մամուլի ու փորձագետների, բավականին հատկանշական է, քանի որ, ըստ նրանց, եթե Պուտինը սկզբում լինի Գյումրիում, այլ ոչ թե ՀՀ մայրաքաղաքում, ուրեմն նա Հայաստան իր կատարած պաշտոնական այցը ընկալում է որպես զուտ աշխատանքային այցելություն սեփական ռազմաբազա, ոչ ավելին: Իսկ եթե Պուտինը սկզբում լինի մայրաքաղաքում, նոր միայն մեկնի՝ Գյումրի, ուրեմն նա հասկանում է, որ պաշտոնական այցով եկել է անկախ պետություն, որն ունի իր մայրաքաղաքը, որտեղից էլ ինքը հանգիստ կարող է մեկնել մեկ այլ քաղաք, որտեղ տեղակայված է իր երկրի ռազմաբազան: Իհարկե, այս վարկածը, քանի Պուտինն իր այցելությամբ ու Հայաստանում արած հայտարարություններով չի հերքել, իրավունք ունի լինելու:

Բայց մյուս կողմից, եթե Պուտինը սկզբում ժամանի Գյումրի, ապա գուցե նա դրանով իսկ ցանկանում է հատուկ շեշտե՞լ, որ ինքն ու իր երկիրն են՝ ի դեմս Գյումրում ռուսական ռազմաբազայի, Հայաստանի անվտանգության միակ երաշխավորը, եւ հենց ՀՀ անվտանգությունն ամրապնդելու հետ կապված հարցերի հիման վրա էլ ընթանան Սարգսյան-Պուտին բանակցությունները: Ընդունենք, որ այստեղ եւս ճշմարտություն կարելի է տեսնել: Եվ վերջապես, անկախ ամեն ինչից, միջազգային արարողակարգի պրակտիկայում բավականին նորմալ ու ընդունված բան է, որ որեւէ երկրի նախագահի, ժամանելով որեւէ այլ երկիր, սկզբում չի այցելում տվյալ երկրի մայրաքաղաք, ավելին, մայրաքաղաքում երբեք էլ չի լինում: Օրինակ՝ ԱՄՆ մեկնած մի շարք երկրների առաջին դեմքերի ամերիկյան նախագահները ոչ բոլոր դեպքերում են Վաշինգտոնում ընդունում: Բարաք Օբամա-Սերժ Սարգսյան հանդիպումը կայացավ ամենեւին էլ ոչ Վաշինգտոնում: Ինքը՝ Պուտինը, բազմաթիվ երկրների ղեկավարների ընդունում է ամենեւին էլ ոչ Մոսկվայում, վերջերս Ռեջեփ Թայիփ Էրդողանն էր Ռուսաստանում, եւ Պուտինը նրան ընդունեց Սանկտ Պետերբուրգում, որն, ի դեպ, «ռուսական Գյումրին» է:

Այնպես որ, նախ սպասենք պաշտոնական տեղեկությանը, թե Պուտինը գալի՞ս է արդյոք Հայաստան, եւ եթե գալիս է, ապա ե՞րբ, ապա նոր ավելի մանրամասն քննարկենք, թե սկզբում որտե՞ղ կլինի նա եւ ինչո՞ւ: Հիմա Պուտինի՝ առաջինը Գյումրի այցելելու իմաստն ու նպատակը ամենեւին էլ միանշանակ չեն. դա կարող է բազմաթիվ բաներ նշանակել, ընդ որում՝ իրարամերժ բաներ: Օրինակ՝ գյումրեցի մեր ծանոթներից մեկը, երբ ասացինք, որ գուցե Պուտինը սկզբում լինի Գյումրիում, ասաց. «Ինչի որտե՞ղ պիտի առաջինը լիներ, որ...»:

**ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ**

# Կհամագործակցեն իտալական քաղաքի հետ

Եվրոմիության ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» ծրագրի շրջանակներում նոյեմբերի 16-19-ը, Հայաստանի պատվիրակության կազմում Իտալիայի Նարդո քաղաքում է եղել Գյումրու փոխքաղաքապետ Ռուբեն Սանոյանը: Ծրագիրն իրականացնում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը՝ Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ համատեղ: Նախագծի առաջնային նպատակներից մեկը եվրոպական երկրների հետ միգրացիոն ոլորտում միջհամայնքային համագործակցության մեխանիզմների մշակումն է, միգրանտներին տրվող տեղեկատվական եւ այլ աջակցության սահմանների ընդլայնումը:

Ըստ քաղաքապետարանի տեղեկատվության, այցի շրջանակներում Գյումրու պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել իտալական Նարդո, Լեչչե քաղաքների եւ Ապուլյայի մարզի իշխանությունների, տեղի հայ համայնքի, ինչպես նաեւ Իտալիայում Հայաստանի դեսպանի հետ, որոնց ընթացքում կողմերը մասնավորապես Գյումրի եւ Նարդո քաղաքների միջեւ համագործակցական կապերի ստեղծմանն աջակցության պատրաստակամություն են հայտնել: Մինչեւ տարեվերջ սպասվում է Նարդոյի պատվիրակության փոխադարձ այցը Գյումրի՝ համապատասխան հուշագիր ստորագրելու նպատակով: Իտալացիները նախնական ցանկություն են հայտնել համագործակցելու քաղաքաշինության, ճարտարապետության, եկեղեցաշինության, մշակույթի եւ զբոսաշրջության զարգացման ոլորտներում:

**Գ. Ս.**

## ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Ոստիկանությունը կոնֆերանսներում եւ կյանքում

*1-ին էջից*

Ու չնայած ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը մի կարճ պահ էր այդ կոնֆերանսում եւ առավոտ վաղ իր ելույթից հետո մեկնել էր, չնայած ԵԱՀԿ համապատասխան ոլորտային պաշտոնյա ու նիստը վարող Մարկո Կուբնիի համոզմամբ՝ Հայաստանում դրականն այն է, որ պաշտոնյաները բարեփոխվելու կամք են դրսեւորում (մի անգամ եթե Հայաստանում Կուբնիին բերման ենթարկեն, ու նա ժպտացող բարձրաստիճանների փոխարեն տեսնի կոպտորեն բերման ենթարկող ոստիկանի՝ հազիվ թե կամքի մասին հիշի այլեւս), այնուամենայնիվ՝ այդ միջոցառումն իրոք հետաքրքրական էր փորձի փոխանակման եւ տեղեկությունների ծավալի առումով: Լավ կլիներ՝ այդ փորձի մասին լսեին ոչ թե գեղեցիկ կոստյումներով մի քանի բարձրաստիճան ոստիկանները, այլ մեր ոստիկանության առավել լայն շերտերը, որոնք այդ մի քանի բարձրաստիճանի նման հնարավորություն չունեն կոնֆերանսից կոնֆերանս ինտելիգենտ տեսքով գեղեցիկ ժպտալու եվրոպական բարեփոխիչներին, նրանց հետ համատեղ բարեփոխական ծրագրեր գրելու՝ միանգամից մի քանի կիլոգրամ կազմող գրականություն դնելով կոնֆերանսի սեղաններին՝ ոստիկանի բարեվարքության կամ ոստիկանություն-հասարակություն կապի վերաբերյալ:

Այ, ուրիշ բան, եթե այս կոնֆերանսն ինտերնետով հեռարձակվեր մեր համայնքային ոստիկանություններում եւ ծառայություններում, եւ սովորական ոստիկանին հասանելի լինեին Վրաստանի ՆԳՆ ներկայացուցիչ Պաատա Տուշկուայի կամ Էստոնիայի ներկայացուցիչ Մարկուս Տոնիսարի պատմությունները՝ իրենց երկրներում հաստատված ոստիկանական դրախտի մասին: Մերոնք իրենց ականջով կլսեին, թե ինչպես Էստոնիայում կարեւորում են ոչ թե ոստիկանի ֆիզիկական տվյալները նախ, այլ՝ մտավոր կարողությունները, քանի որ ֆիզիկական տվյալներ մարզվելու դեպքում հնարավոր է ձեռք բերել, իսկ մտավոր՝ ոչ, իսկ գործ բացահայտելու համար նախ խելք է պետք, թե չէ՝ ծեծելով ցուցմունք կորզել ով չի կարող: Եվ, առհասարակ, մերոնք կիմանային, թե որքան խորն է բարեփոխվել էստոնական ոստիկանությունն այն աստիճան, որ Եվրոպայում համարվում է հասարակության մեջ ամենից բարձր վստահություն ունեցող ոստիկանություններից՝ Ֆինլանդիայի ոստիկանությունից հետո: Կամ որ՝ իսկական ոստիկանը ոչ թե քրեական հանցագործությունների բացահայտման պլանը գերակատարած ոստիկանն է, այլ համայնքային ոստիկանը, ով պետք է կանխի հանցագործությունը, եւ այսպես բազմաթիվ այլ մանրամասներ, թե ի՞նչ է պետք լավ ոստիկան ու ոստիկանություն ունենալու համար: Կամ միգուցե Վրաստանի ներկայացուցչի հիացմունքով կվարակվեր մեր հասարակ ոստիկանը, ով պատմում էր, թե ինչպես Վրաստանում արմատախիլ արեցին «օրենքով» գողերին, նրանց մեկ միլիարդ դոլար ունեցվածքը հանրայնացրին օրենքով, այնպես որ Վրաստանում «օրենքով» գողերի համար այլեւս ձեռնտու չէր մնալը, եւ ինչպես է Վրաստանի ոստիկանությունն ընդհանրապես ազատվել քաղաքական ճնշումներից եւ ուղղորդվել միայն հասարակության կարիքները սպասարկելու վրա:

Դե, բայց սովորական ոստիկանին հասանելի չեն այս տեսակ կոնֆերանսում հնչող եւ բարեփոխվելու ցանկությամբ վարակող ելույթները, իսկ նրանց «շեֆերն» էլ, ովքեր այս կոնֆերանսների մշտական հյուրն են, այս բոլորը գիտեն կամ անգամ իրենց աչքով են տեսել: Ու անգամ՝ նրանց մի մասն այդ բոլորից հետո էլ հետաքրքրված էր լսածով: Ուրեմն արժեր, որ իրենց երկրների ոստիկանական բարեփոխումները ներկայացնող մարդիկ նույն պատմությունները պատմեին հայ ոստիկանների ավելի լայն լսարանների համար:

Իսկ դե առավոտյան, կոնֆերանսի բացմանը մեր ոստիկանապետը հնչեցրել էր այս առիթով սովորաբար հնչեցվող խոսքեր, թե՝ վերջին երկու տարին, այսինքն՝ իր պաշտոնավարման ընթացքում, իրականացվել են այնպիսի աշխատանքներ, որոնք նպաստել են ոստիկանության ծառայության եւ հաշվետվողականության բարձրացմանը, իսկ չլուծված խնդիրներն էլ լուծվելու են այս եւ եկող տարվա բարեփոխումների ծրագրով:

ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար Անդրեյ Սորոկինն էլ նշել էր, թե ոստիկանության համակարգի բարեփոխումը դժվար եւ մարտահրավերներով լի գործընթաց է, որ պահանջում է համակարգային եւ մտածողության փոփոխություն, ոստիկանության աշխատակիցների հմտությունների եւ գիտելիքների կատարելագործում:

Հա, մտածողություն պետք է փոխել, ու դա պետք է անել անկախ նրանից՝ ո՞նց է կոչվելու ոստիկանության այս կամ այն ծառայությունը, հրեշտակների ստորաբաժանում կա՞, թե՞ չկա, պարեկային ծառայություն կստեղծվի՞, թե՞ մի այլ: Ու մինչեւ չփոխվի մտածելակերպը, ոստիկանությունը չընկալվի ոչ թե որպես պատժող, միտինգները ցրող, հասարակ մարդուն վախեցնող, այլ հասարակության ու սովորական մարդու թիկունքին կանգնած կառույց, հազիվ թե ավելանա մեր հասարակության վստահությունը նրա նկատմամբ, որքան էլ ԵԱՀԿ-ի նախաձեռնությամբ հետաքրքրական հավաքներ նախաձեռնվեն, ու այնտեղ մեր եւ եվրոպացի ոլորտային պաշտոնյաները միմյանց ժպտան կամ բարեփոխումների բարձրագույն ծրագրեր գրվեն ու ֆորմալ առումով իրականացվեն:

# Թուրքական ծխածածկույթ

# Գալլիպոլիական արշավ: Արար 2

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն ներկայացրել է իր ծրագիրը՝ լռեցնելու հայերի բարձրաձայն արտահայտությունները 2015 թվին: Մինչ հայերն իրենց սուղ միջոցներով պատրաստվում են ցեղասպանության 100-ամյակը դարձնել շրջադարձային էջ պատմության մեջ, Թուրքիան իր հսկայական միջոցներով արդեն իսկ քայլեր է ձեռնարկում չեզոքացնելու հայկական նախաձեռնությունների ազդեցությունը: Եվ դա, անշուշտ, «հարեւանների հետ զրոյական խնդիրներ» ունենալու Անկարայի արտաքին քաղաքականության շրջանակներում:

Դավութօղլուն հակադարձելու հարմարագույն «թեման» է ընտրել Գալլիպոլիում անգլո-ֆրանսիական ռազմանավերի ու դեսանտային զորքերի դեմ թուրքերի տարած հաղթանակի տոնակատարությունը:

Գալլիպոլիի մարտերը սկսվել են 1915 թվի ապրիլի 25-ին, ուղիղ մեկ օր անց հայ մտավորականների եւ առաջնորդների ձերբակալումից, տարագրումից եւ բնաջնջումից, եւ ավարտվել 1916 թվի հունվարի 9-ին: «Գալլիպոլիի մարտեր», «ԱՆԶԱԿ ԴԵՅ» (ANZAC DAY) եզրերը թեեւ հիշատակվում են պատմության մեջ, սակայն պատմական կարեւոր նշանակություն չունեն:

Առաջին համաշխարհայինի ժամանակ դաշնակից պետությունները Մեծ Բրիտանիայի գլխավորությամբ կռվում էին Գերմանիայի գլխավորությամբ կենտրոնի ուժերի դեմ: Որպես բրիտանական գաղութային հպատակներ՝ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի ազատարար կորպուսները (ԱՆԶԱԿ), այսինքն՝ բանակային զորամիավորումները նույնպես ընդգրկված էին բրիտանական բանակի կազմում, իսկ Թուրքիան Գերմանիային էր միացել ընդդեմ դաշնակից պետությունների: Նշանակալի մարտերից մեկը տեղի ունեցավ Դարդանելում, որտեղ դաշնակից պետությունները փորձեցին Բոսֆորի նեղուցի միջով ճանապարհ բացել եւ միանալ իրենց արեւելյան դաշնակցին՝ Ռուսաստանին:

Մեր օրերում, «ԱՆԶԱԿ-ի օրը» ավստրալացիների համար «ազգային ինքնագիտակցության սկզբնավորման» խորհրդանիշ է: Մինչդեռ թուրքերի համար՝ Մուստաֆա Քեմալին պատմական պատվանդանին բարձրացնելու առիթ, քանի որ, ըստ նրանց, Գալլիպոլիում թուրքական զորքերի առաջնորդը՝ Քեմալը սկզբնավորեց իրենց «ազատագրական շարժումը» (իրականում, սակայն, նա սոսկ շարունակողը հանդիսացավ երիտթուրքերի պատերազմի եւ բնաջնջման քաղաքականության), որն, ի վերջո, հանգեցրեց 1923-ին թուրքական հանրապետության գոյացմանը:

Նախկինում քրեական հանցագործների գաղութ հանդիսացող եւ երկար ժամանակ որպես այդպիսին նսեմացված Ավստրալիայի համար գուցե զարմանալի չէ, որ ռազմական պարտությունը սրբությամբ հիշատակվում է որպես «ազգային ինքնագիտակցության սկզբնավորման» օր: Դա ավստրալացիների ամենաասուրբ տոնն է, եւ հազարավորներ այդ օրը իրենց նորզելանդացի համախոհների հետ Ստամբուլ են մեկնում՝ նշելու թուրքերի՝ իրենց մարդասպանների «հզորությունը» եւ «հաղթանակը»:

Այս մտածելակերպը նման է թուրքերի հանդեպ ունեցած ավստրիացիների վերաբերմունքին: Օսմանյան բանակները երկու անգամ փորձեցին նվաճել Վիեննան, մեկը Սուլեյման I-ի, իսկ մյուսը՝ Կարա Մուստաֆայի իշխանության օրոք (1683): Երկու անգամ էլ նրանք պարտության մատնվեցին: Սակայն 1983-ին ավստրիական կառավարությունը որոշեց օսմանցիների դեմ տարած հաղթանակի 300-ամյակը տոնել թուրքերի հետ, դարձնելով այն ավստրա-թուրքական բարեկամության տոնախմբություն, հաշվի չառնելով, որ երկու պատերազմների ընթացքում թուրքերը կոտորել էին ավստրիացի գերիներին:

Գալլիպոլիի մարտերը մնում են պատմության առեղծվածներից մեկը: Գերմանա-թուրքական զորքերը պարտվում էին ե՛ւ արեւելյան ճակատում, ե՛ւ Մեձավոր Արեւելքում (որտեղ դաշնակից բանակներում կռվում էին նաեւ հայ կամավոր լեգեոնականներ), բայց հանկարծ նրանք հաղթանակ տարան Գալլիպոլիի մարտերում: Այդ ժամանակ Ուինստոն Չերչիլը Բրիտանիայի ռազմածովային նախարարն էր եւ թշնամի բանակի վերաբերյալ ունեցած սխալ տեղեկությունների հիման վրա որոշեց հարձակվել Դարդանելի վրա: Եվ ձախողության մատնվեց: Որոշ պատմաբաններ համոզված են, որ ռազմածովային նախարարությանը դիտավորյալ կեղծ զեկուցագրեր էր ներկայացրել: Կարծիք կա նաեւ, որ թշնամին տեղեկացված է եղել դաշնակիցների ծրագրերի մասին: Հարց է ծագում՝ ինչո՞ւ նման «դավադիր» գործողություն պիտի իրագործվեր: Կատարվածը այնքան էլ հավանական չի թվում, մինչեւ մենք չխորանանք 19-րդ եւ 20-րդ դարերի բրիտանական արտաքին քաղաքականության մեջ:

Բրիտանացիները միշտ էլ փորձել են, եւ դա նրանց հաջողվել է, ռուսներին հեռու պահել Միջերկրական ծովի տաք ջրերից: Իրականում, երբ ռուսական զորքերը հասան եւ նվաճեցին Ադրիանապոլիսը Թուրքիայում, եւ 1878-ին ստորագրվեց Սան Ստեֆանոյի պայմանագիրը, Մեծ Բրիտանիայի վարչապետ Բենջամին Դիզրայելին զայրույթից ձեռնամուխ եղավ նույն տարում Բեռլինում հրավիրել մեկ ուրիշ կոնգրես, որի ընթացքում ստորագրվեց Բեռլինի պայմանագիրը: Վերջինս ողբերգական հետեւանքներ ունեցավ Օսմանյան կայսրությունում ապրող հայերի համար:

Այսպիսով, Գալլիպոլիում բրիտանացիները ցանկացան ցույց տալ իրենց ռուս դաշնակիցներին, որ իրենք փորձ արեցին Ստամբուլը գրավելու, բայց հաջողության չհասան, մի անգամ եւս զրկելով Ռուսաստանին Միջերկրականի տաք ջրերը հասնելու հնարավորությունից:

Գալով թուրքական կողմին՝ պետք է նշել, որ Մուստաֆա Քեմալը թուրք հինգ հրամանատարներից մեկն էր միայն: Այդ ժամանակ օսմանյան հինգերորդ բանակը գտնվում էր գերմանացի Օտտո Լիման ֆոն Սանդերզի հրամանատարության ներքո: Գերմանիան թուրքերին զինել էր ծանր հրետանիով եւ մարտանավերով: Հաղթանակը փաստորեն Գերմանիայինն էր, բայց վերջինս զիջել էր այն Մուստաֆա Քեմալին: Եվ այսօր, երբ Դավութօղլուն պատրաստվում է տոնել Գալլիպոլիի հաղթանակը, այդ վերագրումը փաստորեն պահպանվում է, եւ ոչ ոք չի նշում, որ Աթաթուրքն ընդամենը «երկրորդ ջութակի» դեր էր կատարել մարտերի ընթացքում:

Բայց նախքան հայերին դիմակայելը 2015-ին, թուրքերն այսօր իսկ անակնկալ խլրտումների են հանդիպում Ավստրալիայում: Դավութօղլուն կարծես «ձախ ոտքի վրա վեր կենալով» է սկսել իր նախաձեռնությունները՝ արգելելով Նոր Հարավային Ուելսին պատվիրակություն ուղարկել Թուրքիա՝ մասնակցելու Գալլիպոլիի տոնախմբություններին, որովհետեւ վերջինս հատուկ բանաձեւով ճանաչել է հայերի ցեղասպանությունը: Ավստրալացիները զայրացած են եւ նոր ճակատամարտերի են պատրաստվում: Այս անգամ նրանք Դաշնային կառավարությունից են պահանջում ճանաչել հայերի ցեղասպանությունը:

Թուրքիայի կառավարության ամեն մի նոր ժխտողական քայլ իր հակադարձ քայլն է ստանում: Դավութօղլուի մյուս կոպիտ սխալը վարկաբեկված պատմաբան Ջասթին Մկքարթիին Ավստրալիա ուղեւորելն է՝ «ուսուցանելու» ավստրալացիներին «Հայ-թուրքական պատմական հարաբերությունները» առարկան[1]: Նման դեպքերում բոլոր ծախսերը հոգում է թուրքական կառավարությունը:

Բայց Մկքարթիի «Ի՞նչ պատահեց 1915-23 թվերին» թեմայով դասախոսությունը նսեմացվել է Թուրքիայում հանրային մի այլ քննարկումով. Թուրքիայի խորհրդարանի նախագահ Ջեմիլ Չիչեքը Նոր Հարավային Ուելսի (ՆՀՈւ) խորհրդարանին կոչ է արել վերանայել եւ չեղյալ համարել հայերի ցեղասպանության ճանաչումը: Նա սպառնացել է, որ Թուրքիայի հարաբերությունները Ավստրալիայի հետ կարող են վատթարանալ: Դրան ի պատասխան ՆՀՈւ-ի վարչապետ Բարրի Օ՛Ֆարրելը նշել է, որ նման սպառնալիքները անըմբռնելի են եւ պարսավանքի արժանի: Գրավոր իր հայտարարության մեջ նա թուրք պաշտոնյաներից պահանջել է Գալլիպոլիի 100-ամյակի տոնակատարությունները չօգտագործել քաղաքական նպատակներով:

Քաղաքագետները խորաթափանց են: Նրանք շատ լավ են հասկանում, թե ինչ արժեք ունեն թուրքական սպառնալիքները: Անկարան սրանից առաջ սպառնացել էր նաեւ Ֆրանսիային եւ Շվեյցարիային, բայց հետո դարձյալ վերադարձել նրանց հետ գործակցելու սովորական ոճին:

Մկքարթին անշուշտ օգտվում է խոսքի ազատության իր իրավունքից: Սակայն եթե նա իր սիրելի Թուրքիայում փորձեր հակառակը պնդել, իրեն հավանաբար բանտում կգտներ 301 հոդվածը խախտելու մեղադրանքով: Խոսքի ազատությունն, անշուշտ, կարող է ունենալ տարբեր մեկնաբանություններ: Հուսով ենք, ավստրալահայերը պատշաճ ձեւով վերաբերված կլինեն հյուրընկալվող բանախոսին, որն իր հոնորարը, միեւնույն է, ստանալու է, եթե նույնիսկ բավականաչափ մարդկանց չհամոզի:

Դատական հոգեբույժ եւ պատմաբան, ՆՀՈւ-ի Ուոլլոնգոնգ համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Կապլանն «Օստրեյլըն» թերթի իր բլոգում նշել է. «Ավստրալիայում, այո, կա խոսքի ազատության հանդեպ հանդուրժողականություն, եւ թուրքական սպառնալիքները միայն ավելի են մոտեցնելու այն օրը, երբ դաշնային մակարդակով ճանաչվելու է 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը: Հուսով եմ, դա տեղի է ունենալու «ԱՆԶԱԿ-ի օրվա» առաջին հարյուրամյակից առաջ»: Աստված ձայնը լսի:

Գալլիպոլի արշավի 2-րդ արարն սկսված է: Առաջին մասում թուրքերը իրենց կողքին ունեին գերմանացի Օտտո ֆոն Սանդերզին եւ գերմանական ռազմանավեր՝ հաղթելու համար մարտերում: Երկրորդ մասում նրանք իրենց կողքին չունեն... ճշմարտությունը:

**Դետրոյթ, ԱՄՆ**

**Թարգմ. Հ. Ծ.**

*1. Այս մասին տե՛ս «**Ազգի**» նոյեմբերի 20-ի համարը:*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ**

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի մակերեսը | Գույքի օգտագործման նպատակը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար) |
|---|---|---|---|---|---|
| *Աճուրդով վարձակալության տրամադրվող գույք* | | | | | |
| 1 | Արմենակյան փողոց h.141,2-րդ հարկ | 7.9 | հասարակական | 5 տարի | 7900 դրամ |
| 2 | Բուզանդի 1/3 4-րդ հարկ | 81.8 | հասարակական | 10 տարի | 57300 դրամ |

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձիք, ովքեր Երեւան համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ դեկտեմբերի 11-ին ժամը16-ին , ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2013թ դեկտեմբերի 11-ը, ժամը14-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**«Հայկական Կարիտաս»** բարեսիրական կազմակերպությունը Ավստրիական Զարգացման Գործակալության կողմից ֆինանսավորվող «Հրատապ աջակցություն Սիրիահայ փախստականներին» ծրագրի շրջանակներում հայտարարում է հիգիենայի պարագաների ձեռքբերման նպատակով գործընկերներ կազմակերպություններ ընտրելու բաց մրցույթ:

Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետն է նոյեմբերի 29-ը, ժամը՝ 15:00:

Մանրամասների համար դիմել «Հայկական Կարիտաս»-ի Երեւանի ենթագրասենյակ, Արամ Խաչատուրյանին: Հեռ. +(37410) 56-57-66,ՀՀ, ք. Երեւան, 0010, Չայկովսկի 34, բն. 23:

*Էլ. փոստ՝*
*aram.khachaturyan@foy.cararm.am*

**Սրբագրում եւ խմբագրում**

**ամեն ծավալի ու բովանդակության հայերեն տեքստերի, գրքերի**

**E–mail: xachagox@mail.ru, հեռ.՝ 094 48-68-03**

# Հրաժե՞շտ «հեյդարիզմին»

Օրերս Իլհամ Ալիեւն արժանացել է «ադրբեջանական մամուլի բարեկամ» մրցանակի: Այդ առթիվ նա լրագրողների համար ընդունելություն է կազմակերպել: «Մամուլի բարեկամի» եւ լրագրողների հանդիպումից հետաքրքրական մանրամասնություններ են հայտնի դարձել:

Ընդդիմադիր «Մուսավաթ» կուսակցության պաշտոնաթերթի գլխավոր խմբագիրն, օրինակ, խորին շնորհակալություն է հայտնել, որ Իլհամ Ալիեւը Մամեդ Էմին Ռասուլզադեի հոբելյանը պետականորեն նշելու մասին կարգադրություն է ստորագրել:

Եթե այդ կարգադրությունը գործի, ապա փաստորեն 1993թ.-ից հետո Ադրբեջանում առաջին անգամ պաշտոնապես կխոսվի այսպես կոչված Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության հիմնադիրներից մեկի մասին: Հեյդար Ալիեւի իշխանության գալուց հետո այդ թեման տաբու էր, իսկ Իլհամ Ալիեւը խստորեն պահպանում էր ավանդույթը:

Բանն, իհարկե, այն չէ, թե ում հոբելյանն ինչպես է նշվում: Խնդիրը խորքային է: Ժամանակակից Ադրբեջանի «ճարտարապետ» համարվում է Հեյդար Ալիեւը, պետական քարոզչամեքենան ամենօրյա ռեժիմով հանրությանը ներշնչում է, որ «եթե Հեյդար Ալիեւը չվերադառնար իշխանության, ապա Ադրբեջանը կկորցներ անկախությունը»: Սլաքն ուղղված է Ադրբեջանի ժողովրդական ճակատ եւ «Մուսավաթ» կուսակցություններին, որոնց իշխանությունը տապալելու միջոցով է Ադրբեջանը «կործանումից փրկել» Հեյդար Ալիեւը:

Մինչեւ վերջերս իշխող վարչախումբը հանրության համար օրինակելի եւ միակ ճիշտ ուսմունք ներկայացնում էր «հեյդարիզմը», որի առանցքում իշխանության ժառանգականության գաղափարն էր դրված: Լրագրողների հետ հանդիպմանն Իլհամ Ալիեւը շատ անսպասելի հայտարարել է, որ «Մամեդ Էմին Ռասուլզադեն, Ֆաթալի խան Խոյսկին, Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության մյուս գործիչներն ու նրանց կերպարը պետք է ընդօրինակելի լինեն յուրաքանչյուր ադրբեջանցու համար»:

Իսկ ո՞ւր մնաց «հեյդարիզմը»: Մի՞թե երրորդ ժամկետով «վերընտրվելուց» հետո Իլհամ Ալիեւն իրեն այնքան ապահովագրված է զգում, որ հորդորում է «խորապես ուսումնասիրել Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության հիմնադիրների գործը եւ նրանց գաղափարները», որոնք որեւէ առնչություն չունեն «հեյդարիզմի», այն է՝ իշխանության ժառանգականության եւ «ուժեղ ձեռքի» ու անհատի պաշտամունքի հետ:

Ինչ-որ տարօրինակ բաներ են կատարվում «նորին մեծություն» բռնապետի հետ: Ըստ երեւույթին, նա հարկադրված է քաղաքական որոշակի բարեփոխումներ ձեռնարկել, այլապես «եռացող կաթսան» կպայթի: Բայց քանի որ իրական փոփոխությունները նույնպես կտանեն դեպի սեփական իշխանության կորուստ, Իլհամ Ալիեւը, հավանաբար, նպատակադրվել է ԱԴՀ «հայրերի» առողջ նացիոնալիզմը պատվաստել հեյդարիզմի ծառին»:

Թե ի՞նչ «պտուղ» կստացվի արդյունքում, ցույց կտա ժամանակը: Նույն հանդիպմանն Իլհամ Ալիեւը եւս մի չափազանց ուշագրավ հայտարարություն է արել, որ «ժամանակակից Ադրբեջանը ԱԴՀ իրավահաջորդն է»: Ընդսմին, նա խիստ քննադատության է ենթարկել բոլշեւիկներին, որ անցյալ դարասկզբին «խլել են մեր (Ադրբեջանի) վերջին հարստությունը՝ անկախությունը»:

Ձեւակերպման անտրամաբանականությունը մի կողմ թողած,- որովհետեւ անկախությունը ոչ թե վերջին, այլ՝ առաջին եւ միակ իրական հարստությունն է որեւէ ժողովրդի համար,- նշենք, որ «ժամանակակից Ադրբեջանը ԱԴՀ իրավահաջորդն է» ասելով Իլհամ Ալիեւը փաստացի եւ իրավական առումով ջնջում է իր երկրի պատմության խորհրդային շրջանը:

Իսկ դա այն միակ ժամանակահատվածն է, երբ Լեռնային Ղարաբաղը «թողնված էր» Ադրբեջանի խորհրդային սոցիալիստական հանրապետության կազմում: Ստացվում է, որ Իլհամ Ալիեւը չեղյալ է հայտարարում բոլշեւիկների կողմից Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ ընդունված որոշումը, բոլոր այն իրավական ակտերը, որ Ադր. ԽՍՀ եւ ԽՍՀՄ իշխանություններն ընդունել են 1988-91թ.թ.՝ հիմք ընդունելով ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի հայտնի որոշումը:

Սա արդեն նորություն է, քանի որ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունը երբեք Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ոչ փաստացի, ոչ, մանավանդ, իրավական իրավազորություն չի ունեցել: Եթե Իլհամ Ալիեւն իր նկատառումներում իրոք անկեղծ եւ որպես Ադրբեջանի նախագահ լիովին գործունակ է, նշանակում է, որ նա Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորմանը պետք է մոտենա ոչ թե խորհրդային դարաշրջանի, այլ՝ ԱԴՀ ժամանակների իրողություններից ելնելով:

Իսկ դա նշանակում է, որ միջազգային ասպարեզում Ադրբեջանը պետք է դիտվի երկիր, որի սահմաններն ինքնահռչակված են եւ ենթակա են վերջնական ճշգրտման՝ հարեւան երկրների հետ բանակցությունների ճանապարհով: Այսինքն, Լեռնային Ղարաբաղի խնդիրն Ադրբեջանի համար պետք է դուրս գա «տարածքային ամբողջականության տիրույթից» եւ դիտվի որպես արցախահայության ազատ ինքնորոշման իրավունքի հարց:

Իսկ գուցե Իլհամ Ալիեւն իրո՞ք հոգնել է «հեյդարիզմի» բեռից, որի մի մասն էլ Լեռնային Ղարաբաղի խնդիրն է եւ անկեղծորեն ուզում է հրաժարվե՞լ այդ ավելորդությունից:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՆՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

# 2014 թ. հետո ամերիկյան ամբողջ զորքը կհեռանա Աֆղանստանից

## *Եթե Կարզայը չստորագրի երկկողմ համաձայնագիրը*



**ԱՄՆ-ը Աֆղանստանին սպառնացել է 2014 թ. հետո այդ երկրից լիովին դուրս բերել ամերիկյան զորքերը, եթե նախագահ Համիդ Կարզայը ամենամոտ ժամանակներս չստորագրի մշակված երկկողմ համաձայնագիրը: ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Սյուզան Ռայսը համապատասխան հայտարարություն է արել անձամբ Կարզայի հետ Քաբուլում իր ունեցած զրույցի ժամանակ: Այդ մասին հաղորդում է Սպիտակ տան կայքէջը:**

**Ռայսը պարզաբանել է, որ փաստաթղթի ստորագրման ձգձգումը իրավիճակը զրկում է «այն հստակությունից, որը ԱՄՆ-ին եւ ՆԱՏՕ-ին անհրաժեշտ է 2014 թ. հետո Աֆղանստանում ռազմական ներկայությունը պլանավորելու համար»: Նա Կարզային հիշեցրել է, որ համաձայնագիրը կոչված է օրենքի պաշտպանության տակ առնելու ամերիկացի այն զինծառայողներին, որոնք Աֆղանստանում կմնան հիմնական զորաբաժնի դուրսբերումից հետո:**

**Ռայսի հայտարարությունն արվեց բանակցությունների ընթացքում Կարզայի առաջ քաշած նոր պայմանների ֆոնի վրա: Աֆղանստանի նախագահը ԱՄՆ-ից մասնավորապես պահանջում է դադարեցնել ռազմական գործողությունները հասարակ քաղաքացիների տներում եւ երկիր վերադարձնել Գուանտանամոյի բանտում պահվող աֆղաններին: Բացի դրանից, Կարզայը հայտարարել է, թե համաձայնագիրն արժե ստորագրել միայն նախագահական ընտրություններից հետո: Աֆղանստանում այդ ընտրություններն անցկացվելու են 2014-ի ապրիլին, նշում է Ռոյթեր գործակալությունը:**

**Այն մասին, որ կողմերը հաստատել են երկկողմ համաձայնագրի տեքստը, հայտնի էր դարձել նոյեմբերի 20-ին: Ստորագրումը պետք է կայանար աֆղան ցեղապետերի խորհրդի՝ Լոյա ջիրգայի հաստատումից հետո: Հաղորդվում է, որ ցեղապետերը ոչ միայն հավանություն են տվել փաստաթղթին, այլեւ պահանջել են, որ Կարզայն այն ստորագրի հնարավորինս շուտ:**

**Աֆղանստանի եւ ԱՄՆ-ի երկկողմ համաձայնագիրը ստորագրվելու դեպքում ամերիկյան զորաբաժնի մի մասին հնարավորություն կտա Աֆղանստանում մնալ մինչեւ 2024 թվականը (հիմնական ուժերը դուրս կբերվեն մինչեւ 2014-ի վերջը): Ամերիկացի զինծառայողները պետք է դուրս մնան տեղական օրենքների գործողության ոլորտից եւ իրավունք ստանան արտակարգ իրավիճակներում մտնելու մասնավոր տարածքներ: Բացի դրանից, պայմանագիրը ենթադրում է բազմամիլիոնանոց օգնություն Աֆղանստանի կառավարությանը:**

Պ. Ք.

# Գերմանական համալսարանները կատարել են Պենտագոնի պատվերներ

2000 թվականից մինչեւ օրս գերմանական 22 համալսարաններ եւ գիտահետազոտական ինստիտուտներ դրամաշնորհների տեսքով ընդհանուր առմամբ մոտ 10 մլն դոլար են ստացել ԱՄՆ պաշտպանության նախարարությունից, հաղորդում է գերմանական «Դի Վելթ» թերթը: Պենտագոնը վճարել է ինչպես հիմնարար (ֆունդամենտալ) հետազոտությունների, այնպես էլ ռազմական տեխնոլոգիաների ասպարեզում կատարված աշխատանքների դիմաց: Պենտագոնից դրամաշնորհներ ստացել են նույնիսկ այն համալսարանները, որոնք համապատասխան փաստաթղթերի ստորագրումից հետո հրաժարվել են ռազմական հետազոտություններ անցկացնել բուհի ներսում:

Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիան համալսարանը 2012 թ. ավելի քան 470 հազար դոլար դրամական օժանդակություն է ստացել պայթուցիկ նյութերի մարտական հատկանիշների բարելավման ոլորտում կատարած հետազոտությունների համար, հաղորդում է թերթը: Ֆրաունհոֆերի անվան ընկերությունը (կիրառական հետազոտությունների ինստիտուտների միավորում) ամերիկյան բանակի համար մշակել է նոր զրահապատ ապակի եւ մարտագլխիկներ, Մարբուրգի համալսարանն աշխատել է ամերիկյան անօդաչու ինքնաթիռների տարածական կողմնորոշման համակարգերի եւ «կառավարելի ճշգրիտ զինամթերքների» վրա:

Պենտագոնի եւ գերմանական բուհերի կնքած պայմանագրերի ընդհանուր գումարը կազմել է ավելի քան 9,4 մլն դոլար: Այդ բուհերի թվում են Մաքս Պլանկի ինստիտուտը, Ֆրաունհոֆերի ընկերությունը, Ալֆրեդ Վեգեների անվան բեւեռային եւ ծովային հետազոտությունների ինստիտուտը եւ Լայբնիցի անվան Կենտրոնական ու Արեւելյան Եվրոպայի ագրարային զարգացման ինստիտուտը:

# Սիրիային նվիրված կոնֆերանս 2014 թ. հունվարի 22-ին

Միավորված ազգերի կազմակերպությունը պաշտոնապես հայտարարել է, որ Սիրիային նվիրված հաշտության կոնֆերանսը Ժնեւում սկսվելու է 2014 թ. հունվարի 22-ին: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը տվյալ հաղորդագրությունը մեկնաբանելիս հույս է հայտնել, որ կոնֆերանսը հնարավորություն կտա Սիրիայում վերջ դնել քաղաքացիական պատերազմին եւ սկսել խաղաղ վերափոխություն:

Գլխավոր քարտուղարի խոսքերով՝ կոնֆերանսի նպատակը պետք է դառնա երկրի անցումային կառավարության ստեղծումը, որի կազմում կընդգրկվեն ինչպես իշխանություններին, այնպես էլ ընդդիմությանը գոհացնող մարդիկ: Այդ կառավարությունը Սիրիայում պետք է ստանա ամբողջ իշխանությունը:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը նաեւ հայտարարել է, որ ակնկալում է բոլոր շահագրգիռ պետությունների օժանդակությունը հաշտության բանակցություններին:

Բան Կի Մունը չի ասել, թե ընդդիմության կողմից կոնկրետ ով է մասնակցելու բանակցություններին: Առայժմ որոշված չէ նաեւ, թե ինչ ձեւաչափով են անցկացվելու բանակցությունները: Մասնավորապես հայտնի չէ, թե դրանց մասնակցելո՞ւ են արդյոք Սաուդյան Արաբիան, Իրանը եւ Քաթարը:

Անցյալում սիրիացի ընդդիմադիրները քանիցս հայտարարել էին, որ իրենք չեն մասնակցի որեւէ բանակցության, եթե չկատարվի իրենց գլխավոր պայմանը՝ նախագահ Բաշար Ասադի պաշտոնաթողությունը: Իսլամիստների արմատական որոշ խմբավորումներ նույնիսկ սպառնացել էին սպանել այն մարդկանց, ովքեր կփորձեն նախքան այդ պայմանից, կատարումը բանակցություններում ներկայացնել ընդդիմությանը:

# Չիմբաքրե՛լ Սայաթ-Նովային

Մի անգամ արդեն առիթ ունեցել ենք անդրադառնալու Սայաթ-Նովայի երգերի մերօրյա աղավաղումներին, որոնք կատարվում են ոչ այնքան սկսնակ երգիչների կողմից, որքան՝ վաստակավորների, թեեւ վերջիններիս կոչումն ու առաքելությունը պիտի լինեն, եթե չեն վարանում Սայաթ-Նովա հնչեցնել, վերջինիս երգերը ոչ միայն սոսկ հնչեցնելը, այլեւ նրա հանճարեղ բանաստեղծություններն այսօրվա ունկնդրին հնարավորինս անաղարտ փոխանցելը: Եվ թվում է՝ ի՞նչ կա ավելի հեշտ, քան Սայաթ-Նովա մաքուր հնչեցնելը, եթե նա մաքուր է ի սկզբանե, եւ ամեն մի խաթարում, գիտությամբ թե անգիտությամբ արված, հստակորեն եւ անխուսափելիորեն գծագրվում է անկրկնելի այս սիրերգակի բանաստեղծական տեքստի մաքուր պատկերին: Բայց արի ու տես, որ Սայաթ-Նովային անճիշտ են են մատուցում հենց վաստակավորները:

Ահավասիկ նրանցից թերեւս ամենավաստակավորը՝ Նունե Եսայանը: Այս տիկնոջն ի սկզբանե սխալմամբ թվացել է, թե Սայաթ-Նովայի բանաստեղծություններում բառերի «է»-ն որքան հնարավոր է պիտի հնչեցնել «ի», ինչպես՝ գուզեմ-գուզիմ, բացվել-բացվիլ եւ այլն, ուստի առանց ճիգ ու ջանքի բանաստեղծի գործածած շատ բառեր, օտարաբանություններն էլ հետը, ենթարկում է այդ «օրենքին», օրինակ՝ «դիմեթ»-ը դարձնելով «դիմիթ»:

Հանրային հեռուստաընկերության նոյեմբերի 24-ի կիրակնօրյա եթերը նվիրված էր ժողովրդական երգչուհի Օֆելյա Համբարձումյանին՝ Սայաթ-Նովայի երգերի լավագույն կատարողներից մեկին, ուստի պատահական չէ, որ «Երգ երգոց»-ի հաղորդումն սկսվեց հենց Սայաթ-Նովայով: Սկսեց Նունե Եսայանը:

Ու սկսվեց Սայաթ-Նովայի հերթական «խմբագրումը»:

Նունեի կատարումը երկու «մասից» էր բաղկացած՝ «Թամամ աշխար պըտուտ էկա» եւ «Փահրադըն միռած»: Առաջին երգի միայն առաջին քառատողը երգվեց, բայց այդ կարճ միջոցին էլ երգչուհին կարողացավ բավարարել Սայաթ-Նովային խմբագրելու իր հարատեւ մարմաջը. «տեսնողըն» բնագրային ձեւը նրա շուրթերից հնչում էր «տիսնողըն»: Աղավաղումները ծավալվեցին մյուս երգի կատարման մեջ, սակայն, ի տարբերություն առաջինի, խոսքն այստեղ ոչ թե սովորական աղավաղման մասին է, այլ այնպիսի շփոթի, որն անմեղ աղավաղումը վերածում է կոպիտ իմաստային խաթարման:



Արժե ասել, որ Սայաթ-Նովային, ինչպես յուրաքանչյուր մեծ աշուղի, երգելուց առավել պետք է ճիշտ կարդալ: Արժե ասել, որ աշուղի պարագայում տեքստը թերեւս ամենակարեւորն է, մանավանդ երբ հիշում ենք, որ դրանք հաճախ «փաթեթավորվել» են տվյալ ժամանակի երգարվեստում հայտնի եւ տեքստից տեքստ թափառող ընդհանուր մեղեդիներով: Ուստի աշուղի եւ հատկապես Սայաթ-Նովայի երգը հնչեցնելիս գլխավոր պայմաններից մեկը «քաջ ոսկանի գյուղլի պես» թռչող նրա խոսքին հետեւելն է: Եվ երբ հետեւում ենք այդ խոսքին, մեզ պարզապես չի կարող չհմայել տողը, ուր խոսվում է սիրահարի արդեն սպառվող համբերության մասին: «Տասնումեկ ամիս մունջ իմ կացի՝ տարեն էրված իմ», ասում է բանաստեղծը, եւ մնջության հսկայական տառապանքը էրում է նաեւ մեր սիրտը, իսկ աստվածային խոսքը հավիտյան դաջվում է հիշողության մեջ: Բայց այդ խոսքը, ավաղ, չի դաջվել Նունե Եսայանի հիշողության մեջ, եթե նա կարողացել է խաթարել անխաթարելին՝ «Տասնումիկ ամիս մունջ իմ կացի՝ խարեն էրված իմ»: Մի կերպ ներելի է, որ երգչուհին սայաթնովյան «տասնումեկը» դարձնում է «տասնումիկ». համար/ի/նք, որ հեռավոր այն ժամանակներում թիֆլիսահայոց բարբառում այդպիսի հնչյունափոխություն հնարավոր էր, սակայն ի՞նչ ասենք դարձվածքի արժեք ստացած «տարեն էրվել» խոսքի «տարեն» բառի անփույթ կորստյամբ գեղարվեստական կատարյալ խոսքը պարզունակ ու նաեւ անհասկանալի տողի վերածելու նունեական «խմբագրման» մասին՝ «Տասնումիկ ամիս մունջ իմ կացի՝ խարեն էրված իմ»: Զարմանալի է: Առավել զարմանալի է, որ Նունեի կատարման մեջ «տարեն էրված իմ» արտահայտությունը բացակայում է ամբողջապես:

Երգչուհին ակնհայտորեն չի ընդբռնել բանաստեղծին, չի հասկացել աշուղական խոսքի նրբությունները, մանավանդ այն, երբ բանաստեղծը քառատողը հյուսում է այնպես, որ վերջին՝ կարեւորագույն տողում ամփոփի իր հիմնական ասելիքը: Ակնհայտ է, որ Սայաթ-Նովայի այս բանաստեղծության խնդրո առարկա հատվածի գլխավոր ասելիքը հենց «տարեն էրված իմ»-ն է, եւ վերջինիս նախապատրաստական կառույցներն են «զարեն էրված իմ», «քարեն էրված իմ» եւ համանման արտահայտությունները:

Իսկապես ապշեցնում է այն հետեւողականությունը, որով երգչուհին քարուքանդ է անում «Փահրադըն միռած» երգի առաջին տունը ընդհանրապե՛ս: Նունեի «տարբերակում» բանաստեղծը որտեղ պիտի «զարէն» էրված լիներ՝ «քարէն» է էրված, որտեղ պիտի «քարեն» էրված լիներ՝ «չարեն» է էրված, որտեղ պիտի «տարեն» էրված լիներ՝ «խարեն» է էրված:

Եվ իմաստային այս խառնաշփոթի մեջ արդեն մի տեսակ ներելի են երգի հաջորդ տողերի «խմբագրումները»՝ հաքի (փոխանակ՝ հաքնի), չի կաթի (փոխ.՝ չըկաթի), ռիհան (փոխ.՝ ռեհան), փաթաթած (փոխ.՝ փաթըթած) եւ այլն, թեեւ հանճարեղ բանաստեղծն էն գլխից է զգուշացրել ապագա բոլոր հնարավոր ու մանավանդ ապաշնորհ խմբագիրներին՝ ձեռք չտալ իր բառին ու տառին՝ «իմ գիրն ուրիշ գրեն է»:

**Հ. Գ.** - *Թե որչա՛փ էր պատշաճ այսօրինակ կատարումը նվիրել հայ ժողովրդական երգի թագուհուն, ինչպիսին է իրավամբ Օֆելյա Համբարձումյանը, թող որոշի հայ երգի վաստակավորն ինքը, բայց որ նա թագուհուն շատ ուշադիր լսելու եւ նրանից բանաստեղծական տեքստն անխաթար հնչեցնելու կատարյալ դասեր դեռ ունի առնելու, անժխտելի է:*

ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# Ավետիք Չախալյանի ցուցահանդես

Նոյեմբերի 28-ին «ՀայԱրտ» մշակութային կենտրոնում կբացվի Ավետիք Չախալյանի գեղանկարչական ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը, որի մեկնարկը կտրվի ժամը 11:00-ին:

# Մարտուն Իսրայելյան-75

**Նոյեմբերի 29, ժամը 19:00-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա Մարտուն Իսրայելյանի 75-ամյակին նվիրված համերգը: Հոբելյանական համերգում կհնչեն նրա ստեղծագործությունները Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյան) եւ ջութակահար Անուշ Նիկողոսյանի, մեձո սոպրանո Գոհար Ազիզյանի կատարմամբ:**

**Ծրագրում կհնչեն՝ Կոնցերտ ջութակի եւ լարային նվագախմբի համար եւ Տետր աշնանային երգերի մեձո սոպրանոյի եւ սիմֆոնիկ նվագախմբի համար սիմֆոնիան:**

***ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ***

# «Մանկական Եվրոտեսիլ- 2013» երգի մրցույթին Հայաստանը կներկայանա 3-րդ համարի ներքո




**«Մանկական Եվրոտեսիլ-2013» երգի մրցույթում Հայաստանը կներկայանա երրորդ համարի ներքո: Վիճակահանության տվյալներով մրցույթի մասնակիցները ելույթ են ունենալու հետեւյալ հերթականությամբ.**

**1. Շվեդիա, 2. Ադրբեջան, 3. Հայաստան, 4. Սան-Մարինո, 5. Մակեդոնիա, 6. Ուկրաինա, 7. Բելառուս, 8. Մոլդովա, 9. Վրաստան, 10.Նիդերլանդներ, 11.Մալթա, 12. Ռուսաստան:**

**Այս տարի մրցույթի կանոնակարգում որոշակի փոփոխություն է կատարվել: Վիճակահանությանը մասնակցել են հենց մրցույթի մասնակիցները, ոչ թե պատվիրակությունների ղեկավարները, ինչպես եղել է նախկինում:**

**«Մանկական Եվրոտեսիլ- 2013» երգի մրցույթն այս տարի կանցկացվի Ուկրաինայի Արվեստների ազգային պալատում նոյեմբերի 30-ին՝ «Be Creative» նշանաբանի ներքո: Հայաստանը Եվրոպայի այս հեղինակավոր պատանեկան մրցույթին ներկայանում է 7-րդ անգամ:**

**Ընդհանուր առմամբ, մրցույթին այս տարի կմասնակցի 12 երկիր:**

**Տեղեկացնենք նաեւ, որ սկսվել է մասնակիցների մրցութային հագեցած շաբաթը: Նկարահանվել է արդեն մասնակիցների ելույթից առաջ ցուցադրվող բացիկը: Բոլոր երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ ձայնագրվել է նոր երգ, որը կրում է «Be Creative» խորագիրը:**

**«Մանկական Եվրոտեսիլ-2013» տարբերանշանը Puzzle Man է: Փազլ հավաքում են աշխարհի բոլոր երեխաները, որը զարգացնում է երեխայի ստեղծագործական միտքը եւ խորհրդանշում է տարբեր մասնիկներից բաղկացած միասնություն: Եվրոպայի տարբեր ծայրերից հավաքված երեխաները կհամախմբվեն մեկ գաղափարի շուրջ «Եղիր ստեղծագործ»:**

**Մրցույթն Առաջին ալիքը կցուցադրի նոյեմբերի 30-ին՝ ժամը 21:45-ին:**

*Առաջին ալիք*
*Հասարակայնության հետ*
*կապերի բաժին*

# Բեն Աֆլեկի նոր ֆիլմը



**Աֆրիկայի մասին ֆիլմ նկարահանելու ցանկություն Բեն Աֆլեկը դեռ 3 տարի առաջ է ունեցել, սակայն Warner կինոստուդիան միջոցներ նրան տրամադրեց միայն հիմա, ռեժիսորի՝ «Արգո» ֆիլմի՝ ամերիկյան կինոակադեմիայի կողմից այս տարվա լավագույն ֆիլմ հռչակվելուց հետո:**

**«Կոնգոյի մասին միշտ եմ ուզեցել ֆիլմ նկարահանել,- ասել է ռեժիսորը,- բայց Հոլիվուդի իմ կոլեգաները այն կարծիքի էին, թե դա հետաքրքրական թեմա չէ»: Հիմա քանի որ իրավիճակը փոխվել է եւ նրան չեն մերժի ֆինանսներ տրամադրել որեւէ ֆիլմի համար, ռեժիսորը օգտվել է առիթից՝ իրականացնելու տարիների ցանկությունը՝ ստեղծել ֆիլմ աֆրիկյան այս երկրի եւ այնտեղ ապրող մարդկանց մասին: Ֆիլմի սցենարը գրում է Ուիլլ Սթեյմլզը: Գործողությունները ծավալվելու են Աֆրիկայում: Վարձկան մարդասպանների խումբը առաջադրանք է ստանում սպանել սեփական ժողովրդին կեղեքող դիկտատորին: Ֆիլմը առավել հետաքրքրական եւ սուր կդարձնեն խորհրդածությունները ոչ միարժեքորեն ընկալվող բարոյականության, եւ այն մասին, թե բարեգործությունը եւ օտար պետությունների աջակցությունը ինչպիսի ազդեցություն ունեն ժամանակակից նեոգաղութատիրության վրա:**

**Բեն Աֆլեկը Eastern Gongo Initiative ֆոնդի հիմնադիրն է, նա ձեւավորել է դա Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն իր կատարած 5 այցերից հետո: Բացի ֆիլմի ռեժիսորական աշխատանքից Բեն Աֆլեկը մտադիր է նաեւ հանդես գալ դերերից մեկում:**

Ս. Բ.

# ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**«Հայկական Կարիտաս»** բարեսիրական կազմակերպությունը Ավստրիական Զարգացման Գործակալության կողմից ֆինանսավորվող «Հրատապ աջակցություն Սիրիահայ փախստականներին» ծրագրի շրջանակներում հայտարարում է սննդի ձեռքբերման նպատակով գործընկերներ կազմակերպություններ ընտրելու բաց մրցույթ:

Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետն է նոյեմբերի 29-ը, ժամը՝ 15:00:

Մանրամասների համար դիմել «Հայկական Կարիտաս»-ի Երեւանի ենթագրասենյակ, Արամ Խաչատուրյանին: Հեռ. +(37410) 56-57-66,ՀՀ, ք. Երեւան, 0010, Չայկովսկի 34, բն. 23:

*Էլ. փոստ՝ aram.khachaturyan@foy.cararm.am*

ԱԶԳ

# Մարզական

## Արգենտինացի Գուստավո Ալֆարոն ՀՀ հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնի թեկնածուներից մեկն է

Ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիան շարունակում է ազգային հավաքականի գլխավոր մարզչի որոնումները՝ բանակցելով մի շարք մասնագետների հետ: Նրանցից մեկը 51-ամյա արգենտինացի Գուստավո Ալֆարոն է, որը դեկտեմբերին ժամանելու է Երեւան՝ ծանոթանալու ֆուտբոլային ենթակառուցվածքներին: Այս մասին «Արմենիա» հեռուստաընկերությանը հայտնել է ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը: Վերջինս նշել է, որ Հայաստանի հավաքականի նոր գլխավոր մարզչի առջեւ խնդիր է դրվելու Եվրո-2016-ի եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճել:



Գուստավո Ալֆարոն ծնվել է 1962-ի օգոստոսի 14-ին Արգենտինայի Ռաֆայելա քաղաքում: Նա իր ֆուտբոլային կարիերան սկսել է այդ քաղաքի «Ատլետիկոյում», որտեղ հանդես է եկել 1988-1992-ին կիսապաշտպանական օղակում: Թիմում անցկացրած 126 հանդիպումներում նա 6 գոլի հեղինակ է դարձել:

1992-ին 30 տարեկանում ավարտելով ֆուտբոլիստի կարիերան, Գուստավո Ալֆարոն նույն թիմում անցել է մարզչական աշխատանքի: Հետագայում արգենտինացի մասնագետը մարզել է արգենտինական «Պատրոնատո», «Քյուիլմես», «Բելգրանո», «Սան Լորենցո», «Արսենալ» եւ «Ռոսարիո» թիմերը: 2009-ին նա կարճ ժամանակ գլխավորել է Սաուդյան Արաբիայի «Ալ Ահլին»:

2010-ից Ալֆարոն «Արսենալի» գլխավոր մարզիչն է: 2012-ին նա թիմին երկրի գավաթակրի եւ սուպերգավաթակրի տիտղոսներին է արժանացրել: Նույն թվականին «Արսենալը» դարձել է Արգենտինայի գարնանային առաջնության հաղթող:

Եթե Ալֆարոյի թեկնածությունը հաստատվի, ապա նա կդառնա ՀՀ ազգային հավաքականը գլխավորած արգենտինացի 2-րդ մարզիչը: Հիշեցնենք, որ 2002-ին հավաքականի ղեկը վստահվել էր արգենտինացի Օսկար Լոպեսին, որի օրոք մեր ֆուտբոլիստները ոչ-ոքի (2-2) խաղացին ուկրաինացիների հետ եւ պարտվեցին հույներին:

## Հրաձիգ ամուսինների դիպուկ կրակոցները

**Գերմանիայում բնակվող եւ Հայաստանը ներկայացնող հրաձիգ ամուսիններ Քրիստիան եւ Իրինա Լաուերները հաջող են հանդես եկել Չեխիայում անցկացված «Գրան պրի Պլզեն» միջազգային մրցաշարում: Մրցումներին մասնակցել են նաեւ Սլովակիայի, Չեխիայի, Գերմանիայի, Բոսնիայի եւ ԱՄՆ-ի հրաձիգները:**

**Մրցումների առաջին օրը Քրիստիան Լաուերը օդամղիչ հրացան, 10 մ, 60 կրակոց վարժությունում խոցել է 615 միավոր եւ զբաղեցնելով 6-րդ տեղը, իրավունք է ստացել շարունակելու պայքարը մեդալների համար: Եզրափակիչ փուլում Քրիստիանը գրավել է 5-րդ հորիզոնականը:**



**Նույն վարժության կանանց մրցումներում Իրինան, որ շուտով մայր է դառնալու, 40 կրակոցով 408,3 միավոր է խոցել եւ նախնական փուլում զբաղեցնելով 6-րդ տեղը, մտել է եզրափակիչ: Սակայն Իրինային էլ չի հաջողվել մրցանակակիր դառնալ՝ եզրափակիչում գրավելով 4-րդ տեղը:**

**Մրցումների 2-րդ օրը հրաձիգները կրկնել են վարժությունները: Իրինան խոցել է 408,8 միավոր եւ գրավել է 5-րդ տեղը: Եզրափակիչ փուլում նա հանգրվանել է 4-րդ հորիզոնականում: Քրիստիանը 618,8 միավորով նախնական փուլում կրկին 6-րդն է եղել, իսկ եզրափակիչում զբաղեցրել է 7-րդ տեղը:**

## Ցուցադրական մրցաշար Դավիթ Նալբանդյանի պատվին

Բուենոս Այրեսում Դավիթ Նալբանդյանի մարզական կարիերայի ավարտին նվիրված թենիսի ցուցադրական մրցաշարում արգենտինահայ թենիսիստը 3-6, 4-6 հաշվով պարտվեց աշխարհի թիվ 1 ռակետ Ռաֆայել Նադալին: Այնուհետեւ Նալբանդյանն ընկերակցելով Խուան Մոնակոյին, զուգախաղում պարտվեց Նադալ-Ջոկովիչ զույգին:

31-ամյա Դավիթ Նալբանդյանն ուսի վնասվածքի պատճառով դեռեւս հոկտեմբերին էր հայտարարել թենիսիստի կարիերան ավարտելու մասին: Նա դարձել է 11 մրցաշարերի հաղթող, իսկ «Մեծ սաղավարտի» մրցաշարերում ամենամեծ հաջողությանը հասել է 2002-ին Ուիմբլդոնի մրցաշարում՝ մտնելով եզրափակիչ, որտեղ պարտվել է ավստրալացի Լեյթոն Հյուիթին:

«Շատ ուրախ եմ, որ մասնակցեցի Դավիթ Նալբանդյանի հրաժեշտի խաղերին: Դավիթի, Ռաֆայել Նադալի եւ Խուան Մոնակոյի հետ այս օրերին հիանալի զվարճացանք», նշել է սերբ թենիսիստ Նովակ Ջոկովիչը:

## Հայ շախմատիստները Չեննայից տեղափոխվեցին Հայդերաբադ

**Չեննայի շախմատի մրցաշարի ավարտից հետո հայ շախմատիստները մասնակցում են Հնդկաստանի Հայդերաբադ քաղաքում մեկնարկած մրցաշարին: Առավել հաջող են մեկնարկել Հովիկ Հայրապետյանը, Սամվել Տեր-Սահակյանն ու Լեւոն Բաբուջյանը, որոնք 2 հնարավորից վաստակել են 1,5-ական միավոր: Սամվելը հաղթել է Դասա Պրասենջիթին, ոչ-ոքի է խաղացել Չիթամբարամ Արավինդի հետ: Լեւոնը եւս մեկնարկեց հաղթանակով Կումար Մասայի հետ մրցախաղում, այնուհետեւ հաշտություն կնքեց Տեջա Ռավիի հետ: Հայրապետյանը հաղթեց Սրիհարի Ռագունանդանին եւ ոչ-ոքի խաղաց Ռեդդի Չակրավարտիի հետ:**

**Վահե Բաղդասարյանն ունի 1 միավոր, Տիգրան Ս. Պետրոսյանը՝ 0,5: Մարիա Գեւորգյանը 2 պարտիաներում էլ պարտվել է: 2 տուրից հետո 2 միավորով աղյուսակը գլխավորում են 16 շախմատիստներ**



## Ոչ-ոքի Հայաստան-Ռուսաստան մրցախաղում

**Երեկ Թուրքիայի Անթալիա քաղաքում մեկնարկեց շախմատի աշխարհի թիմային առաջնությունը: 10 հավաքականներ սկսեցին պայքարն աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար, որը ներկայումս պատկանում է Հայաստանի հավաքականին: Մեր ընտրանին իր միջին վարկանիշով (2715) 2-3-րդ տեղերն է բաժանում ուկրաինացիների հետ: Իսկ ամենաբարձր վարկանիշն ունեն ռուսները (2759), որոնց հետ էլ մեկնարկային տուրում մրցեցին մեր շախմատիստները:**

**Հայաստանի հավաքականին վիճակահանությամբ բաժին է ընկել 6-րդ համարը: Բուքմեյքերները Հայաստան-Ռուսաստան մրցախաղում նախապատվությունը տալիս էին ռուսներին, որոնց հաղթանակը գնահատվել էր 1,94 գործակցով, իսկ հայերինը՝ 4,5: Ոչ-ոքիի գործակիցը 2,62 էր:**

**Առաջինն իր մրցախաղն ավարտեց Գաբրիել Սարգսյանը՝ 41-րդ քայլին հաշտություն կնքելով Յան Նեպոմնյաշչիի հետ: Քիչ անց նրա օրինակին հետեւեցին Լեւոն Արոնյանն ու Վլադիմիր Կրամնիկը, Սերգեյ Մովսիսյանն ու Սերգեյ Կարյակինը: Մրցախաղի ելքը պետք է վճռեր Վլադիմիր Հակոբյանի եւ Ալեքսանդր Գրիշչուկի մրցավեճը: Նավակային վերջնախաղում թեեւ Գրիշչուկը մեկ զինվոր ավելի ուներ, սակայն պարտիան 87-րդ քայլին ավարտվեց ոչ-ոքի:**

**Այսօր կայանալիք 2-րդ տուրում Հայաստանի հավաքականը կմրցի Եգիպտոսի ընտրանու հետ, որը 1,5-2,5 հաշվով պարտվեց գերմանացիներին: ԱՄՆ-ի հավաքականը 1,5-2,5 հաշվով զիջեց ուկրաինացիներին: ԱՄՆ-ի կազմում Վարուժան Հակոբյանը 4-րդ խաղատախտակի վրա ոչ-ոքի խաղաց Յուրի Կրիվորուչկոյի հետ: Չինաստանը 2,5-1,5 հաշվով հաղթեց հոլանդացիներին, Ադրբեջանը նույնպիսի արդյունքով առավելության հասավ թուրքերի նկատմամբ:**

## Բրոնզե մեդալ Հայաստանի դրոշի ներքո

**Տյումենում կայացած կռափարի բարձրացման աշխարհի առաջնությունում 21-ամյա Գրիգոր Կուրղինյանը մինչեւ 95 կգ քաշային կարգում արժանացել է բրոնզե մեդալի: Գրիգորը ծնվել է Աբովյանում, ներկայումս ընտանիքով բնակվում է Բաշկիրստանի մայրաքաղաք Ուֆայում: Չնայած նա ՌԴ քաղաքացիություն ունի եւ Բաշկիրստանի չեմպիոն է, սակայն աշխարհի առաջնությունում պաշտպանեց Հայաստանի մարզական պատիվը:**

## «Շիրակը» կհամագործակցի «Պերսեպոլիսի» հետ

**Ինչպես տեղեկացանք Գյումրիի «Շիրակի» մամուլի քարտուղարությունից, օրերս Թեհրանում համագործակցության վերաբերյալ պայմանավորվածություն է ձեռք բերվել հայկական եւ պարսկական «Պերսեպոլիս» ակումբների նախագահներ Արման Սահակյանի եւ Մոհամադ Ռույանիանիի միջեւ: Նախատեսվում է 2 ակումբների միջեւ կազմակերպել ընկերական հանդիպումներ, փոխանակել ֆուտբոլիստներ, համագործակցել մանկապատանեկան մարզադպրոցների զարգացման գործում:**

**«Պերսեպոլիսն» Իրանի ամենատիտղոսակիր ակումբն է, որն 9 անգամ նվաճել է երկրի չեմպիոնի տիտղոսը, 5 անգամ դարձել է գավաթակիր: Իրանական ակումբը նաեւ Ասիայի ամենահեղինակավոր թիմերից մեկն է: Ներկայումս «Պերսեպոլիսը» գլխավորում է երկրի բարձրագույն խմբի առաջնության աղյուսակը:**

**«Պերսեպոլիսը» համագործակցության պայմանագրեր ունի նաեւ Մադրիդի «Ռեալի», «Միլանի», «Ռուբինի», բրազիլական «Սան Պաուլոյի» եւ պորտուգալական «Բեյրա Մարի» հետ:**

## ՀՀ հավաքականը կզբաղեցնի 34-րդ տեղը

**Հինգշաբթի օրը ՖԻՖԱ-ն կհրապարակի դասակարգման հերթական ցուցակը: Հայաստանի ազգային հավաքականը թեեւ նոյեմբերին խաղ չանցկացրեց, սակայն ցուցակում 4 հորիզոնականով կառաջադիմի՝ զբաղեցնելով 34-րդ տեղը: Դա Հայաստանի հավաքականի պատմության մեջ նոր ռեկորդային ցուցանիշ կլինի:**

## Ռոնալդուն տարիմերայի լավագույն ֆուտբոլիստ

**Իսպանական «Մարկա» թերթի անցկացրած հարցման արդյունքներով Մադրիդի «Ռեալի» եւ Պորտուգալիայի հավաքականի հարձակվող Քրիշտիանու Ռոնալդուն ճանաչվել է երկրի առաջնության տարվա լավագույն ֆուտբոլիստ: Նրան կհանձնվի Ալֆրեդո դի Ստեֆանոյի անվան մրցանակը:**



**Հարցման արդյունքներով Ռոնալդուն վաստակել է 32 միավոր: Նա առաջ է անցել Մեսիից (26 միավոր) եւ Ինիեստայից (11):**

## Սեւյանը կրկին պարտվեց

**Հունգարիայի շախմատի մրցաշարի 9-րդ տուրում Սամուել Սեւյանը պարտվեց Ցաբա Հորվաթին: Սեւյանը 2,5 միավորով 5-րդ տեղում է: 6,5-ական միավորով առաջատարներն են Ցաբա Հորվաթն ու Իմրե Բալոգը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**«Հայկական Կարիտաս»** բարեսիրական կազմակերպությունը Ավստրիական Զարգացման Գործակալության կողմից ֆինանսավորվող «Հրատապ աջակցություն Սիրիահայ փախստականներին» ծրագրի շրջանակներում հայտարարում է դեղորայքի մատակարարման նպատակով գործընկեր կազմակերպություններ ընտրել ու բաց մրցույթ:

Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետն է նոյեմբերի 29-ը, ժամը՝ 15:00:

Մանրամասների համար դիմել «Հայկական Կարիտաս»-ի Երեւանի ենթագրասենյակ, Արամ Խաչատուրյանին: Հեռ. +(37410) 56-57-66, ՀՀ, ք. Երեւան, 0010, Չայկովսկի 34, բն. 23:

Էլ. Փոստ՝ aram.khachaturyan@foy.cararm.am

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

| h/h | Գույքի անվանումը | Պետհամարանիշը | Թողարկման տարեթիվը | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | ՄԱԶ 5334 (ԿԱ-3577 Կռունկ) | 087 LS 63 | 1989թ | 1,800,000 |
| 2 | Ֆոլկսվագեն տուարեգ | 100 SL 08 | 2007թ | 10,440,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ դեկտեմբերի 11-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ դեկտեմբերի 11-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 1 | Ավտոկայանատեղի | 13.23 | 1,692,000 |
| 2 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 2 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 3 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 3 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 4 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 4 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 5 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 5 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 6 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 6 | Ավտոկայանատեղի | 13.48 | 1,710,000 |
| 7 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 7 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 8 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 8 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 9 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 9 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 10 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 10 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 11 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 11 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 12 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 12 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 13 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 13 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 14 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 14 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 15 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 15 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 16 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 16 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 17 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 17 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 18 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 18 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 19 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 19 | Ավտոկայանատեղի | 20.29 | 2,592,000 |
| 20 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 20 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 21 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 21 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 22 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 22 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 23 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 23 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 24 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 24 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 25 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 25 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ դեկտեմբերի 11-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ. դեկտեմբերի 11-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բաշինջաղյան փողոց 192/6 | կաթսայատուն | 155.92 | 137.98 | 6,300,000 |
| 2 | Կոմիտասի պողոտ 34/5 | կաթսայատուն | 290.22 | 258.82 | 22,100,000 |
| 3 | Գյուրջյան 15/19 | կաթսայատուն | 5,992.14 | 703.01 | 94,800,000 |
| 4 | Շեւչենկոյի փ. 34/3 | կաթսայատուն | 526.73 | 326.07 | 17,250,000 |
| 5 | Խաղաղ Դոնի փող. 27/4 | կաթսայատուն | 307.44 | 342.50 | 17,700,000 |
| 6 | Ն.Շենգավիթ 9փ., 2/3 | կաթսայատուն | 316.18 | 286.76 | 6,100,000 |
| 7 | Տիտոգրադյան փող. 1/9 | կաթսայատուն | 161.00 | 161.00 | 9,350,000 |
| 8 | Գաջեգործների փող. 74/2 | կաթսայատուն | 125.05 | 125.05 | 3,800,000 |
| 9 | Արցախի փողոց 8/13 | կաթսայատուն | 439.06 | 439.06 | 25,500,000 |
| 10 | Էրեբունի 1 | կաթսայատուն | 240.72 | 240.72 | 10,800,000 |
| 11 | Էրեբունի փողոց 29/1 | կաթսայատուն | 262.30 | 262.30 | 7,350,000 |
| 12 | Շահվերդյան 18, ԿԶՀ 31 | կաթսայատուն | 254.27 | 236.60 | 16,350,000 |
| 13 | Շիրակի 2 նրբ., 4/1 | կաթսայատուն | 206.00 | 152.87 | 6,150,000 |
| 14 | Իսակովի պող., 52/27 | կաթսայատուն | 158.76 | 158.76 | 6,850,000 |
| 15 | Գ. Մահարու 39/9 | կաթսայատուն | 328.00 | 328.00 | 9,050,000 |
| 16 | Թեյշեբանի 1 շենք | Կաթսայատուն | 21035 | 753.1 | 401,760,000 |
| 17 | Նոր Նորք 8-րդ մ/շ Մինսկի փողոց 5/8 ՇՁԿ | Կաթսայատուն | 24671.48 | 3166.7 | 609,550,000 |
| 18 | Ծերենցի փողոց 3/3 | կաթսայատուն | 158.76 | 141.36 | 9,400,000 |
| 19 | Բագրատունյաց 49 | կաթսայատուն | 237.46 | 209.56 | 21,300,000 |
| 20 | Բաղրամյան 1 փակ. 14 շենք հ.163 տարածք | ոչ բնակելի տարածք | | 42.00 | 13,950,000 |
| 21 | Ն.Զարբախ 3-րդ փողոց 58/4 | շինություն | 41.65 | 33.07 | 2,250,000 |
| 22 | Անդրանիկի 10/1 շենք թիվ 57 | ոչ բնակելի տարածք | | 154.50 | 10,500,000 |
| 23 | Սիլիկյան թաղ. 10 փողոց 44 շին | շինություն | 1058.71 | 271.31 | 15,600,000 |
| 24 | Իսակովի 50/16 | կաթսայատուն | 101.76 | 84.56 | 4,450,000 |
| 25 | Լեփսիուսի 6փող. 37շ. 46շին | ոչ բնակելի տարածք | | 39.3 | 4,250,000 |
| 26 | Թումանյան 11 շենք 72 շին | ոչ բնակելի տարածք | | 10.3 | 1,000,000 |
| 27 | Աբովյան փողոց 62 շենք հ.31 | ոչ բնակելի տարածք | | 40.95 | 10,550,000 |
| 28 | Բագրատունյաց 22/6 | Կաթսայատուն | 284.82 | 252.84 | 16,700,000 |
| 29 | Շեւչենկոյի 4/4 | Կաթսայատուն | 150 | 131.04 | 5,600,000 |
| 30 | Անդրանիկի 122/1 | Կաթսայատուն | 384.75 | 281.75 | 20,070,000 |
| 31 | Սուրենյանց փողոց Մեղիկ 2 | Կաթսայատուն | 352.2 | 262.7 | 18,500,000 |
| 32 | Նորք Մարաշ 9-րդ փողոց 121/1 | Կաթսայատուն | 105.6 | 89.6 | 6,350,000 |
| 33 | Մայիսի 9 փողոց 13/3 | կաթսայատուն | 148.75 | 139.15 | 6,950,000 |
| 34 | Սասունցի Դավիթ 13 | կաթսայատուն | 122.7 | 104.46 | 8,500,000 |
| 35 | Չարենցի 76/6 | կաթսայատուն | 54.82 | 42.04 | 8,600,000 |
| 36 | Քաջազնունու 11 շենք 111 | ոչ բնակելի տարածք | | 350.8 | 14,170,000 |
| 37 | Դավթաշեն ՇՁԿ հ. 3 | Կաթսայատուն | 20,891.14 | 2,402.60 | 139,300,000 |
| 38 | Չարենցի փողոց թիվ 76/5 | կաթսայատուն | 2,251.36 | 1,244.00 | 363,900,000 |
| 39 | Լենինգրադյան փողոց 38/4 | Կաթսայատուն | 219.15 | 161 | 9,495,000 |
| 40 | Արտաշիսյան 3 նրբ 26/3 | Կաթսայատուն | 168.32 | 143.37 | 3,420,000 |
| 41 | Արտաշիսյան 60/3 | Կաթսայատուն | 220 | 193.29 | 3,780,000 |
| 42 | Գուլակյան 16բ | Կաթսայատուն | 203 | 203 | 12,420,000 |
| 43 | Անդրանիկի փ. 40/3 | Կաթսայատուն | 337.28 | 287.92 | 19,350,000 |
| 44 | Էրեբունի 14/4 | Կաթսայատուն | 170.18 | 145.68 | 8,838,000 |
| 45 | Շիրակի փ.6/10 | Կաթսայատուն | 309.50 | 207.98 | 12,798,000 |
| 46 | Ա.Սարգսյան 5/2 | Կաթսայատուն | 127.40 | 99.18 | 5,400,000 |
| 47 | Հալաբյան 41/3 | Կաթսայատուն | 257.12 | 161.46 | 9,090,000 |
| 48 | Սեւակի 7/6 | Կաթսայատուն | 190.29 | 139.20 | 10,260,000 |
| 49 | Սմբատ Զորավարի 42/3 | Կաթսայատուն | 262.26 | 217.11 | 11,385,000 |
| 50 | Ֆուրմանովի 1/1 | Կաթսայատուն | 295.85 | 278.97 | 14,940,000 |
| 51 | Զեյթուն 3 թաղ. Լեփսիուսի փող. 37/6 | Կաթսայատուն | 194.78 | 163.74 | 9,000,000 |
| 52 | Արշակունյաց պող. 32/4 | Կաթսայատուն | 138.17 | 101.13 | 9,810,000 |
| 53 | Հ.Էմինի 80/2 | Կաթսայատուն | 214.46 | 180.31 | 10,935,000 |
| 54 | Մամիկոնյանց 41 շենք 6 բնակարան | բնակարան | | 122.50 | 30,690,000 |
| 55 | Մամիկոնյանց 41 շենք 10 բնակարան | բնակարան | | 69.80 | 17,910,000 |
| 56 | Գ-3 թաղամաս հ.41 | անավարտ շինություն | 1,021.93 | 1,919.98 | 37,440,000 |
| 57 | Նուբարաշեն 2ա շենք 26 շինություն | ոչ բնակելի տարածք | | 118.51 | 10,143,000 |
| 58 | Արտաշիսյան պ., 3 նրբ. 26/2 | Կաթսայատուն | 141.75 | 117.06 | 3,033,000 |
| 59 | Շերամի 23/4 | Կաթսայատուն | 318.72 | 292.82 | 14,310,000 |
| 60 | Հ Հակոբյան 1/7 | Կաթսայատուն | 108.80 | 108.80 | 18,000,000 |
| 61 | Այասի փողոց թիվ 1/3 | Կաթսայատուն | 414.50 | 305.70 | 19,800,000 |
| 62 | Բաղրամյան 2 փակուղի 10/1 | Կաթսայատուն | 148.85 | 125.44 | 16,200,000 |
| 63 | Մամիկոնյանց փող. 56/9 | Կաթսայատուն | 218.24 | 260.50 | 31,545,000 |
| 64 | Դավթաշեն 4 թաղ. ԿԶՀ 2 | Կաթսայատուն | 247.00 | 216.00 | 16,290,000 |
| 65 | Դավթաշեն 4 թաղ. ԿԶՀ 3 | Կաթսայատուն | 265.50 | 212.30 | 18,000,000 |
| 66 | Հալաբյան 27շ. 75 տարածք | ոչ բնակելի տարածք | | 56.70 | 2,970,000 |
| 67 | Պուշկինի 44 | ոչ բնակելի տարածք | | 16.80 | 1,980,000 |
| 68 | Մաշտոցի 20 | ոչ բնակելի տարածք | | 37.80 | 5,670,000 |
| 69 | Զաքյան փողոց 1շենք 38 տարածք | ոչ բնակելի տարածք | | 58.10 | 6,660,000 |
| 70 | Խորենացու 25 շենք 95 տարածք | ոչ բնակելի տարածք | | 40.90 | 3,400,000 |
| 71 | Կաթսայատուն Նոր Արեշի 1/25 | կաթսայատուն | 195.50 | 195.50 | 7,470,000 |
| 72 | Խաղաղ Դոնի փող. 7/8 | կաթսայատուն | 312.78 | 348.10 | 18,270,000 |
| 73 | Աթոյան փողոց անցուղի 18/3 | կաթսայատուն | 441.95 | 441.95 | 15,840,000 |
| 74 | Ռուբինյանց փողոց թիվ 24/1 | կաթսայատուն | 158.72 | 158.72 | 8,865,000 |
| 75 | Սեբաստիա 18/2 | կաթսայատուն | 194.83 | 173.00 | 7,830,000 |
| 76 | Վիլնյուսի փող.,67/2 | կաթսայատուն | 242.50 | 212.75 | 6,030,000 |
| 77 | Կուրղինյան 5/3 | կաթսայատուն | 162.97 | 135.50 | 6,750,000 |
| 78 | Սաֆարյան 16/4 կաթսայատուն | կաթսայատուն | 306.25 | 288.00 | 11,160,000 |
| 79 | Մոլդովական փողոց 50/9 | կաթսայատուն | 192.66 | 163.10 | 7,965,000 |
| 80 | Հ/Ա Բ-2 թաղ. 92 շենքի հ.20 | ոչ բնակելի տարածք | | 58.70 | 4,374,000 |
| 81 | Բաղրամյան 30 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 89.70 | 12,690,000 |
| 82 | Նալբանդյան 50 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 14.00 | 1,530,000 |
| 83 | Մամիկոնյանց 1/3 | կաթսայատուն | 307.20 | 280.90 | 21,510,000 |
| 84 | Դավթաշեն 2 թաղ. ԿԶՀ 1 | կաթսայատուն | 237.12 | 206.60 | 11,340,000 |
| 85 | Չեխովի 48/4 | կաթսայատուն | 160.25 | 131.30 | 11,475,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ դեկտեմբերի 11-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ դեկտեմբերի 11-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 26.11.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: